ԲԻՒԶԱԿՆ

ՀԱՅԱԹԱԹԵՐԹ

ԻՆ. ՏԱՐԻ 17 ՓԵՏՐՈՒԱՐ 1907 ԹԻՒ 15—16

Օսմ. Առեւտրական Սենեակի ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

×

Խորին երախտագիտութեամբ ստացանք Կ. ՊՈԼՍՈՑ ՕՍՄԱՆԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ, ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԵՆՆԿԻՆ կողմէ գնահատական նամակ մը, որ «ԲԻՒԶԱԿՆ»ի խմբագրութեան համար բարոյական մեծագոյն վարձատրութիւն մ'է, ինչպես նաեւ գերազանց ապացոյց մը թէ երկրին վաճառականութեան, երկրագործութեան եւ նարտարարուեստին մատուցուած ամենափոքր ծառայութիւնն իսկ կը գնահատուի ձեռնհաս պաշտօնատարներէ կողմէ, որ Վ.Ե.Հ. ԿԱՅՍԵՐ ԲԱՐՁՐ ԿԱՄՔԻՆ ՀԱՄԱՋԱՅՆ, անդուլ կ'աշխատի Օսմանեան վաճառականութեան ա'լ աւելի զարգացմանը եւ յառաջդիմութեանը համար:

«ԲԻՒԶԱԿՆ»ի խմբագրութիւնը ամենայն յարգանքով կը փութայ իր շնորհակալութիւնները մատուցանել Օսմ. Առեւտրական Սենեակի Նախագահ Վսեմաշուք Մէհմէտ Ապուտ էֆ.ի և յարգելի անդամներուն, որոնք շնորհ ըրին իրենց խրախուսիչ գնահատումն ընծայել այս թերթին:

Ահաւասիկ Օսմանեան Առեւտրական Սենեակի անդամներուն անունները. —

Ա. Նախագահ. — ՎՍԵՄԱՇՈՒՔ ԱՊՈՒՏՋԱՏԷ ՄԷՀՄԷՏ ՊԷՑ ԷՖԷՆԴԻ [Ապուս եւ Հալպուճի վաճառատուճեճ]

Դեր-Նախագահ. — ՎԱՍԵՄ. ՄՈՒՍԹԱՖԱ ՇԻԿՐԻ. Պէց էֆէնտի [Գարամուսալի ջայագի գործարանեց]
խորհրդականք. — ՍԵՆՆԳՆԵՐԻՄ ՄԱՆՈՒԿՆ ԷՖԷՆՏԻ ՀԱՃԻ ՄԷՀՄԷՏ ՇԷՖԻԳ Պէց
[Շէֆիգ Հարիս եւ ընկ. վաճառատունեց]

Անդամք. — Վահեմ. Տեարք
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՖ. ԱԱԼԱՆԵԱՆ
ԺՕԶԷՖ Ա.ԶԱՐԵԱՆ ԷՖԷՆՏԻ [Ազարեան Հայր և Որդի վաճառատունէն]

ՊԷՆ ՃԻՊԱՐԱ. ՍԱԻՏ Պէց
ԳՕԶՄԷԴՕ ԱՐԻՍԴՈՏԷՄ ԷՖ. [Ա. ԳՕԶՄԷԴՕ և ընկ. վաճառատունէն]

ԹԷՈՏՈՐ ԿՈՒՐՃԻ ԷՖ. [Տնօրէն կուրճի չոգենաւային ընկերութեան և Միութեան Պանքային]
ՖՕՍԹԷՆ ԳՈՒԴՕ ԷՖ. [Գուդօ եղբարց վաճառատունէն]
ՍԹԵՖԱՆՕ Տ'ԱՆՏՐԷԱ. ԷՖ. [Ֆռադէլի Տ'անտրէա վաճառատունէն]

ՋԱՐՄԱՑՐ ՃՇՄԱՐՏԱԽՕՍ ԷՖ.
ԷՐ ԱԼԻ ՋԱՏԷ ՀԱՃԻ ՀԱՍԱՆ ՇԷՐԻՖ ԷՖ.
ԱԹԱՆԱՍ ԵՕՐԿԻԱՏԻՍ ԷՖ. [Եօրկիատի և Ջավուշօղլու վաճառատունէն]

ԽՈՒՂՈՒՍԻ ՋԱՏԷ ՕՍՄԱՆ ՆՈՒՐԻ ԷՖ.
Մ. ԷՏՈՒԱՐՏ ՀԻԿՔՆԷՆ [Ընդհանուր Տնօրէն Անատոլուի Օսմ. երկաթուղւոյ ընկերութեան]
ԱՐՏԱՇԷՍ ՀԻՒՐՄԻՒԶ ԷՖ. [Տնօրէն «Ռուսիա» ապահովագրական ընկերութեան Կ. Պոլսոյ ճիւղին]
ՏԻԳՐԱՆ ԷՖ. ՄԱՆՈՒԿԵԱՆ [Տ. Մանուկեան և եղբ. վաճառատունէն]

ՄԱՆԻ ՋԱՏԷ ՀԱՃԻ ՀԻՒՍԷՅԻՆ ՍԱՊՐԻ ԷՖ.
ՆԷՄԼԻ ՋԱՏԷ ՀԱՍԱՆ ԹԱՀՍԻՆ ՓԱՇԱ.
Մ. ԼԷՈՆ ԲԻՐԷՐՆՕ [Տնօրէն ի. Գամօնտօ և ընկ. վաճառատան]

ՍԲԻՐԱԲԻ ՍԻՏԷՐԻՏԷՄ ԷՖ.
ԵԱՆՓՕ ՍԴԱՎՐՕ ԷՖ. [Մ. Սդավրօ և ընկ. վաճառատունէն]

Մ. ՎԻԹԱԼԻՍ ԼԷՈՆԱՐ [Տնօրէն Օսմ. կայսերական Պանքային Պոլսոյ մասնաճիւղին]

Անուասիկ Օսմ. Առեւտրական Սենեկի գնահատական նամակին պատճենը. —

درسعادت تجارت و زراعت
وصنایع اوطه‌سی

عدد ۲۷۳

ارمنیجه پوراغن نام تجارت غزته‌سی مدیریت بهیه‌سنه
رفعتلو افندی

صرف امور تجارته دائر واسبوعی اولهرق موضوع موقع انتشار ایتمکده بولندیغکز پوراغن نام ارمنیجه غزته‌نك تجارت عثمانیه‌جه موجب استفاده مباحثی حاوی اولدیغی مذکور غزته‌نك بعض نسخه‌لری ترجمه‌لری مطالعه‌سندن مستبان اولدیغنك بیانه مثابرت اولندی

فی ۱۳ شباط سنه ۱۳۲۲

درسعادت تجارت وزراعت وصنایع
اوطه‌سی رئیسی
محمد عبود

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍՈՑ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՒ ՁԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ՍԵՆԵԱԿ

Համար 273

Հայերէն ԲԻԲԼԻԱԿՆ ազուն Առեւտրական Լրագրին
Մեծայարգ Տնօրէնութեան
Մեծայարգ Տէր,
Զուս առեւտրական գործոց վերաբերեալ եւ շա-

բաթական ընդառիմ Ձեր հրատարակած ԲԻՒՐԱԿՆ հայերէն յուգրիւ խանի մը թիւերուն քարգմանութիւնները հանկցուած է որ այդ թերթը Օսմանեան վաճառականութեան օգտակար յօդուածներ կը պարունակէ: Ձայս կը փութանք յայտնել Ձեզ:

Կ. Պոլսոյ Առեւտրական, Երկրագործական եւ Ճարտարարուեստական Սենեկին
Նախագահ
ՄԷՀՄԷՏ ԱՊՈՒՏ

ՇԱՀԱԴԻՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՈՒՂԹԵՐԸ

×

Հանքային, ճարտարութեան եւ վարկային բոլոր արժեթուղթերը շահադիտական թուղթեր կը կոչուին, որովհետեւ անոնց արժէքը եւ տուած շահաբաժինը չարունակ ելեւէջներու ենթակայ է: Հանքային ձեռնարկի մը յաջողութիւնը արտադրուած հանածոներու քանակութենէն կախում ունի, իսկ ճարտարութեան մը վիճակը՝ իր գործառնութեան ընդարձակութենէն: Հանքի մը արտադրութիւնը, ճարտարութեան ձեռնարկի մը ստացած ապսպրանքները տարուէ տարի կը փոփոխին անհամեմատ կերպով ու անոնց հետ կը փոփոխի նաեւ շահաբաժիններու քանակը, եւ բաժնեթուղթերուն գինը: Վարկային թուղթերուն մեծ մասը, մանաւանդ բաժնեթուղթերը այն վարկային հաստատութիւններուն, որոնք պանքայի յատուկ գործերէ զատ առեւտրական ձեռնարկներ ալ կ'ընեն, շահադիտական կը կոչուին:

Արեւտր. ծանուցումներով հրատարակուած ու այլազան ձեւերով մեզ մատուցուած օտար արժեթուղթերուն մեծագոյն մասը շահադիտական թուղթերու տեսակին կը պատկանին, զորս գնելու համար ծայր աստիճան զգուշաւորութիւն կը պատուիրեն սակարանի գործառնութեանց հմուտ անձեր:

Ձարտարային կամ հանքային թուղթերը բացարձակ կերպով վնասաբեր չեն, ընդհակառակն անոնց մէջ կը գտնուին սննդիչներ, որոնք երկար տարիներ առատ չափ հեր տուած եւ շատ արդիւնաւոր եղած են բաժնետէրերուն, բայց եւ այնպէս մասնագէտները անվահեմութիւն կը համարին նիւթական համեստ վիճակի անձերուն այդ թուղթերուն դրամ տալը։ Անոնք արժէթուղթեր դնելու համար չափ մ'ալ դրած են, թուղթին տեսակը եւ գնողին վիճակը համեմատելով։ Այդ մասնագէտները կը սովրեցնեն որ հիմնական արժէթուղթերը, ինչպէս Օսմ. Միացեալը, Ֆրանս. Ռանդը, Անգլ. Քոնսոլիտէն, Լայլն առ առաջակ կը պատշաճին ամէն վիճակի մարդոց։ Անոնց դրամ տուողը հանգիստ ու ապահով կրնայ ըլլալ, եւ ան դրամատէրները կամ հաստատութիւնները, որոնք իրենց եկամուտովը կ'ապրին ու անկէ չեն կրնար բան մը խնայել, պարտաւոր են եթէ ոչ ամբողջը, գոնէ 3/4ը կամ 4/5ը հիմնական արժէթուղթերու դրամ պահպանել։ Շահաւոր թուղթերն ալ կը յարմարին ամէն դասակարգի դրամատէրերու եւ խնայողներու, բայց իրենց կազմութեան համապատասխան թիւով։ Հիմնական թուղթերը շատ նիհար արդիւնք մը կուտան, տարեկան 2, 3% տոկոս մը, ու այս պատճառաւ ալ դժուշաւոր եւ խոհեմ հաստատութիւնները լոկ ստիպուած են իրենց հարստութեան մէկ մասը յատկացնել շահաւոր կոչուած եւ 4—5% տոկոս բերող թուղթերուն ու այդ միջոցով իրենց տարեկան հասոյթը կրկնապատկել։ Այսու հանդերձ փոքր հաստատութիւնները եւ քիչ խնայողներու համար բնաւ նպատակահարմար չէ իրենց արժէթուղթերուն 20—25%էն աւելի համեմատութեամբ շահաւոր տեսակէ թուղթերու դրամ տալ։ Իսկ շահադիտական թուղթերը կը պատշաճին միմիայն անոնց, որոնք խիստ ճոխ վիճակ մը ունին, մեծ խնայողութիւններ կրնան ընել, եւ առանց զգալու կրնան դրամական պատահարներու տոկալ։ Փոքր հաստատութիւնները, խնայողները եւ անոնք որ տակաւին գործերու վրայ տեղեկութիւն առնելու քիչ միջոցներ, արհեստական նուազ ծանօթութիւն մը ունին, բացարձակապէս հեռի կենալու են շահադիտական թուղթերէ։

Սակարանի գործերու համառ անձերու կողմէ տրուած այս խորհուրդը թէեւ չափազանցութիւն կը նկատեն ոմանք, բայց շատ ճիշտ է, մասնաւորաբար անոնց համար, որոնք

դիւրութիւն չունին իրենց թուղթերուն ներքին արժէքին ու օրուան գնոյն վրայ մօտէն հակելու։ Շահադիտական թուղթերը չգնելու մէջ մէկ անպատեհութիւն մը միայն կայ, և մեծ անպատեհութիւն մը։ Այս թուղթերը երկրի մը ճարտարային ձեռնարկներու դրամագլուխը կը կազմեն, և ո՛վ որ կը գնէ չահադիտական թուղթ մը, ճարտարային գործի մը դրամագլուխ յատկացուցած կ՛ըլլայ։ Եթէ վերոյիշեալ մասնագէտներու յանձնարարած զգուշաւոր ընթացքը գործադրուի և միմիայն մեծահարուստ անձեր գնեն այդ թուղթերէն, այն ատեն երկրին ճարտարութիւնները յառաջդիմելու համար պէտք ունեցած դրամագլուխը չեն գտներ, չեն յաջողիր ու կ՛իյնան և այդ յետադիմութենէն կը տուժեն երկրագործութիւն, վաճառականութիւն։

Այս ըսուածներէն կը հետեւի որ մեր գաւառացի խնայողներն ու դրամատէրերը ծայր աստիճան զգուշաւոր պէտք է ըլլան և չգնեն ա՛յնպիսի օտար արժեթուղթեր, որոնց անունը միայն լսած են և չեն գիտեր ո՛չ անոնց գործին վիճակը, ոչ ալ զոյն հրապարակ հանող մարմինը։ Եւ եթէ երբեք անոնք տրամադրութիւն մը ունենան արժեթուղթերուն դրամ յատկացնելու, պարտաւոր են ընտրել տեղական արժեթուղթերը։ Անոնց վրայ տեղեկութիւն առնել դիւրին է, արդէն ձեռնհաս պաշտօնատունը այլալրնութեամբ կը հակէ անոնց ընթացքին ու գործառնութիւններուն վրայ։ Եւ մեր արժեթուղթերը գնելով երկրին ճարտարութեանց ալ նպաստած կ՛ըլլան, առանց իրենց դրամը կորնցնելու։

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Առեւտր. գործերու վրայ

×

ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Caf կամ cif (c, արժէք—f, նաւավարձ—i կամ a, ապահովագին) պայմանով սակարկութեան մէջ, ծախողը պարտաւոր է գնողին յանձնել վաճառքին բեռնագիրը, հաշուե-

ցոյցն և ապահովագրութեան թուղթը, եթէ այս վերջինը պատրաստ է վճարելու իր վրայ քաշուած փոխդիրը, կամ ընդունելու զայն՝ եթէ պայմանաժամ ունի։ Ասոր դէմ, դնողը պարտաւոր է ընդունիլ կամ վճարել իր վրայ քաշուած փոխադիրը ու ապա ստանալ վաճառքը, որ երրորդի մը՝ փոխադիրը կրողին համար գրաւական մը կը նկատուի։ Եթէ դնողը կասկած կամ դիտողութիւն մը ունենայ ղրկուած վաճառքին յատկութեանը վրայ, այս պարագան ազատ չի թողուր փոխդիրն ընդունելէ կամ վճարելէ, այլ պէտք է ըստ օրինի ստանայ վաճառքը և ապա ծախողին դիմէ իր պահանջումներուն համար։

×

«Չ Ի Ք»Ի ՊԱՅՄԱՆՆԵՐ

Չէքը մէկէ մը պահանջուած տրամադրելի գումարի մը վճարման համար հրամանագիր մ'է։ Ինչ որ ալ ըլլայ այդ պահանջին ծագումը, հնչուն դրամ, հաշիւ, առնելիք, և՛ն. կարելի է անոր փոխարէնին համար չէք քաշել, պայմանաւ որ հաշիւը տեսնուած ու մաքրուած, ինչպէս նաեւ պահանջելի ու վճարողին կողմէ տրամադրելի ըլլայ անիկա։

Արդ, կարելի՞ է կապել, գրաւել երրորդի մը քով գըտնուած տրամադրելի այդ գումարը, եթէ մէկը պահանջ մը ունենայ անոր տէրոջմէն, այսինքն չէք քաշելու արտօնուած անձէն։ Չէքը պահանջուած գումարը կը ներկայացնէ։ Երբ անիկա փոխանցուի երրորդի մը, այն գումարը պահանջելու իրաւունքն ալ կը փոխանցուի երրորդին, և պահանջին տէրը կ'ըլլայ չէքը կրողը։ Ուստի ա՛յն առեն միայն կրնանք չէքին փոխարէնը գրաւել կապել, ցորչափ չէքը դեռ քաշողին քովը գտնենք։ Եթէ չէքը ուրիշի մը փոխանցուած է, տրամադրելի գումարին տէրը չէքը կրողն է, որուն դիմելու ա՛ւ և իրաւունք մը չունինք։

×

ԱՐԺԵԹՈՒՂԹ ՄԸ ԻՆՉՊԻՍ ԳՆԵԼՈՒ Է

Պրիւսէլի սակարանին գործակալներէն մին կտրանցուց կամ դողցուց Վակոն Լի ընկերութեան պարտաթուղթ մը, որ վճա-

կահանութենէն 500 ֆր. չահած էր։ Սակարանին գործակալը՝ առանց ուրիշ ձեռակերպութեան՝ լմնաց տուաւ միայն կեդրոնին, որպէս զի յիշեալ պարտաթուղթին համար ուրիշ ներկայացնողի դրամ չը վճարէ։ Այս դէպքէն երկու ամիս վերջը, անծանօթ մը՝ որուն ձեռքը անցած էր այդ պարտաթուղթը, կը դիմէ սեղանաւորի մը և կ'առաջարկէ բովմը զեղչել և դրամը վճարել։ Սեղանաւորը առանց ո՛և է կասկածի, և քանի մը հոգիի մէջ, կը սակարկէ ու փոխարէնը վճարելով պարտաթուղթը կ'ստանայ։ Սեղանաւորը պարտաթուղթը կը ծախէ պանքէռի մը, պանքէռը՝ սակարանի գործակալի մը, այս վերջինը ուրիշի մը, և այսպէս ձեռքէ ձեռք ութը ինը անձերու միջեւ կը շրջաբերի, և հուսկ յետոյ կը հասնի ձեռքը ա՛յնպիսի սակարանի գործակալի մը, որ լսած էր ու գիտէր թէ վաղն Լի ընկերութեան կեդրոնը այդ պարտաթուղթին փոխարժէքը չվճարելու համար զեկոյց մը ստացած էր, ու այս պատճառաւ անիկա կը մերժէ զայն գնել։ Պարտաթուղթը կ'սկսի յետադարձ շրջան մը ընել, ամէն գնող տեղեկանալով խնդրոյն, ետ կուտայ անո՛ր ուրկէ գնած էր, և վերջապէս կը հասնի սեղանաւորին ձեռքը։ Արժեթուղթը կորնչցնող սակարանի գործակալը լսելով եղելութիւնը, դատ կը բանայ սեղանաւորին դէմ և իր արժեթուղթը կը պահանջէ։ Դատավարութեան մէջ, սեղանաւորին փաստաբանը թէեւ կ'առարկէ որ գործակալը այդ պահանջումը ընելու համար պարտաւոր էր թերթերով, ապգերով և ուրիշ միջոցներով հասարակութեան ծանուցանել, հրապարակել իր կորուստը,—ի՛նչ որ չէ ըրած—և կեդրոնին միայն խնդրով բաւականացած է, բայց դատարանը անհիմն գտաւ այս առարկութիւնը և վճռեց սակարանին գործակալին յանձնել պարտաթուղթը, նկատելով որ սեղանաւորը թերացած էր արժեթուղթ գնելու ամենապարզ և միանգամայն էական կանոնին մէջ։

Արժեթուղթը միմիայն ծանօթ և իսկութիւնը յայտնի անձերէ պէտք է գնել, հակառակ պարագային, գնողը կը դատապարտուի տուժել անկէ յառաջ եկած վնասները։

×

Եթէ առեւտրական մը պարտք ունենայ շատ. մը անձերու,

ասոնցմէ միայն մէկը կրնա՞յ դատարան դիմել ու անանկա-ցընել զայն, յայտարարելով որ իրեն ունեցած պարտքը օրին չի վճարեր անիկա եւ ինք ալ վստահութիւն չունի անոր գործին վրայ. — Այս հարցին վրայ եւրոպական դատարան մը անցեալները վճռեց որ եթէ միայն մէկ հոգի դատ բանայ առեւտրականի մը դէմ, որուն մէջ բոլոր պահանջատէրերը վստահութիւն ունին եւ անոր իր գործին գլուխը գտնելը կ'ուզեն, այդ առեւտրականը չի կրնար անվնասացուիլ: Եւ եթէ երբեք այս առթիւ անկիկա գրամական անձկութեան մէջ կ-նայ, վճարումները ընելու դժուարութիւն քաշէ եւ ուշացնէ, առեւտրականին այս վիճակը վճարումներ դադրեցնելու իմաստով չի մեկնուիր:

×

Կարելի՞ է առեւտրականի մը արգիլել իր անունը կրելէ. — Առեւտրական մը վերջերս գործ բացաւ եւրոպայի առեւտր. հրապարակներէն մէկուն վրայ, ուր մեծնոյն անունն ու մականունը կրող հին, բազմազբաղ եւ հանրածանօթ առեւտրական տուն մը գոյութիւն ունէր: Այս վերջինը դատարան դիմեց եւ խնդրեց որ միւսին արգիլէ իր անունով գործելէ, առարկելով թէ իրենց անունին եւ մականունին նմանութենէն մեծապէս պիտի վնասէ ինք:

Եւրոպայի առեւտր. դատարանները չատ անգամներ վճիռներ տուած ու արգիլած են վաճառականի մը իր անունը կրելէ, գոյն հաշուեցոյցերու, ապդերու եւ կամ վաճառատան թապէաներու մէջ դնելէ: Բայց այս անգամ դատարանը հակառակ վճիռ մը տուաւ, հիմնուելով սա՛ հանգամանքի վրայ թէ դատարանը ձեռնհաս է վաճառականին իր անունը կրելէ արգիլել սա՛յն պարագային, երբ ակնյայտ տեսնուի որ այս անձը գործի ձեռնարկած է լոկ՝ հրապարակին վրայ նախապէս հաստատուած, իր անունը ունեցող եւ միեւնոյն գործով զբաղող վաճառատան մը հետ մրցելու մտօք եւ ի վնաս այս վերջնոյն անուններու նամանութիւններէն օգտուելու նպատակաւ: Յորչափ նոր գործի ձեռնարկող առեւտրականին քով այս ապօրէն մրցումի պարագան կամ խաբէութեան նպատակ մը ապացուցուած չէ, արդարութեան դէմ կ'ըլլայ իր անունը կրելէ արգիլել զայն, սա հաւանականութեան համար թէ այս պարագային հրապարակին վրայ ուրիշ առեւտրական մը կը վնասուի:

Արթէզեան Ջրհորները

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

ԵՒ ԱՆՈՆՑ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

ՏԵՍԱԿԷՏՈՎ

×

Մեր գաւառային թղթակիցներէն մին ասկից առաջ ծանուցած էր մեզ Արթէզեան ջրհորներու շինութիւնը նոյն գաւառին մէջ եւ այս առթիւ խնդրած էր հանի մը ծանօթութիւններ տալ այս ջրհորներուն օգտակարութեան մասին։

Ահաւասիկ նոյն ծանօթութիւնները. –

Մեր երկրին մէջ Արթէզեան ջրհորներ բանալու գաղափարը կէս դար առաջ գոյութիւն ունէր։ 1851ին կայսերական կառավարութիւնը Բարիզէն ըերել տուաւ երկրաչափ մը՝ Մ. Տըկուզէն, որպէս զի ուսումնասիրէ չուրերուն վիճակը և անոնց մասին տեղեկագիր մը տայ։ Մ. Տըկուզէն յայտարարեց որ եթէ Պոլսոյ հողին կարծրացեալ կրայլին մասին վրայ արթէզեան ջրհորներ բացուին, կրնան յաջողիլ և օգտակար արդիւնք մը տալ։ 1894ին Պելժիական ընկերութեան ներկայացուցիչ մը՝ Մ. Բելլէ՝ փորձի համար Պոլսոյ մէջ Արթէզեան ջրհոր մը բանալու ձեռնարկեց որ ուրիշ նոյն կարգի ձեռնարկներու տիպար մը պիտի ըլլար։ Այդ ջրհորները բանալու չարժառիթը Պոլսոյ ժողովուրդին ուելի մաքուր ըմպելի չուր մը հայթայթել էր, պէտք մը որ այժմ լիովին կը մատակարարուի նոր բացուած չուրի ճամբաներով։

Գաւառի մէջ բացուած Արթէզեան ջրհորները երկրագործական նպատակաւ բացուած են։ Շատ ուրախալի է որ մեր գաւառներուն մէջ կ'ընդհանրանան այդ ջրհորները, որոնք մեծ առատներ պիտի ըլլան մեր երկրագործութեան յաջողութեան ու զարգացման։

Արթէզեան ջրհորներու ծագումը ասիական է։ Այդ ըբը-

հարներըը անյիշատակ ժամանակներէ ի վեր գոյութիւն ունէին Ասիոյ անապատներուն, Զիմոստանի, Հնդկաստանի մէջ։ 1110ին ներմուծուեցան անոնք Եւրոպայի մէջ և առաջին անգամ 1126ին Սալթուսի (Ֆրանսա) շաւթրէօզեան վանքին մէջ պեղեցին այս ջրհորներէն հատ մը, որուն անուանով Սալթէզեան ջրհոր կոչուեցաւ։

Բացատրենք թէ ի՞նչ են Սալթէզեան ջրհորները։

Անձրեւի ջուրերը հողէն ծծուելով գետնի խորերը կ'իջնեն և երկու կաւային խաւերու մէջտեղ կը դիզուին, և երբ գետինը ծակելով հասնինք կաւին, ջուրը կը գտնենք. այս նպատակաւ բացուած ծակերը ջրհոր կ'ըսուին։ Լեռներու մօտ հովիտներու մէջ բացուած ջրհորներուն ջուրը վեր կը ժայթքէ, որովհետեւ այդ ջուրը կուգայ հովիտէն բարձր գտնուող լեռներու ծոցին մէջ գտնուած կաւային խաւերէն։ Այս խաւերը ո՛րքան աւելի բարձր ըլլան, այնքան աւելի վեր կը ժայթքեն այն ջուրերը։ Բնական օրէնք մ'է որ եթէ արգելք չունենայ, ջուրը իր աւազանին հաւասար բարձրութեամբ վեր կ'ելնէ, ինչպէս որ խողովակի մը երկու ծայրերը երբ դնես մէկ կողմ ծուռնք ու մէկ ծայրէն ջուր լեցնենք, ջուրը խողովակին երկու ծայրերուն մէջ հաւասար բարձրութեամբ կը գտնուի։ Սալթէզեան ջրհորներու չինութիւնը մեծամեծ դժուարութեանց կը բախի երբեմն և այն ատեն հարկ կ'ըլլայ հազար կանգուն փորել հողը, ջուրի հանդիպելու համար։ Կամ կրնայ պատահիլ որ հողը ա՛յնպիսի կազմութիւն մը ունենայ, որ շուտ մը քայքայի, ծակին ճամբան գոցուի և ջուրին վեր ելնելուն արգելք ըլլայ։ Այս անպատեհութիւններուն առաջքը առնելու համար պէտք կ'ըզգացուի մեծամասնս երկաթէ խողովակներ, փայտէ չինարանի կը ձայլն զետեղելու։ Ո՛րքան ալ սուղ նստի Սալթէզեան ջրհորներու չինութիւնը, անոնք կրնան լիովին փոխարինել իրենց համար չծախսուած գոհողութիւնները։ Այս ջրհորները անջրդի տեղերու երկրագործութեան զարգացման մէջ մեծ դեր խաղացած են։ Անոնց չնորհիւ անապատներու մէջ արուեստական կանաչազարդ ոլորտներ կազմուած են, ու ա՛յն տեղերը, ուր երբեմն քար ու աւազ միայն կը գտնուէին, այժմ գեղեցիկ բոյսերով ու ծառերով զարդարուած են։

Մայրաքաղաքներու մէջ, խմելու ջուր հայթայթելու համար ալ Արթեզեան ջրհորներ բանալու միջոցին կը դիմեն։ Լոնտոնի Թրաֆալկար Սքուէրի աղբլուներուն ջուրը երկու արթեզեան ջրհորներ կը մատակարարեն։ Բարիզի մէջ չինուած են երկու հիանալի ջրհորներ, Կրընէլի և Բասլի Արթեզեան ջրհորները։ Առնց առաջինը 800 կանգուն է եւ խորութիւն ունի և չինուած է եօթուկէս տարուան մէջ։ Օր մը դիպուածով ծանր դգալ մը իննսու այդ ջրհորին ծակէն վար և 14 ամիսէն կարելի եղաւ զայն հանել։ Այս պատճառաւ աշխատութիւնք ընդհատեցան։ Եւրոպայի արթեզեան ջրհորներուն մէջ ամէնէն խորունկը Լիւքսէմպուրկ Մանսորֆի ջրհորն է, որ 1100 կանգուն խորութիւն ունի։ Այս մեծ ջրհորները 24 ժամուան մէջ 12—24,000 խորանարդ ջուր կուտան։

ՕՍՄԱՆԵԱՆ ԶԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏ

×

«ԱՊԱ»Ն Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՊԱԼԸՔԷՍԻՐԻ ՄԷՋ

Պալըքէսիրի մեր մասնաւոր թղթակիցը, Ադամ էֆ. Ասլանեան, հետեւեալ շահեկան տեղեկութիւնները կը հաղորդէ տեղական «ապա»յի պատրաստութեան մասին. —

1. — Նախ կ'սկսին ամառուընէ հաւաքել ապաի նոր խանիւթը՝ այսինքն բուրդը, որով կը լեցնեն լրիւնց գորձանեներնին։ Աբդէն ամէն արհեստաւոր այս գործին կը յատկացնէ իր տան մէկ սենեակը, որ կը կոչուի եուն օտասը։

2. — Ժողվուած բուրդերը կը մաքրուին ա՛յ թէ մեքենայի միջոցաւ այլ ձեռքով։ Դեռատի աղջիկներն ու տատրեց կիներըը, կը մաքրեն ու երեք տեսակի կը վերածեն բուրդը, առաջին, երկրորդ և երրորդ տեսակ։ Քեպիր ապա կոչուածը կը պատրաստուի առաջին տեսակ բուրդով, որ բ. և գ. տեսակներէն կը տարբերի թէ՛ գոյնով, թէ լայնքով և

տակունութեամբ։ Երկրորդ տեսակ բուրդով կը պատրաստուի խպրդ ապան որ ո՛չ նուազ տակունութիւն կ՛ունենայ և տևողչինէն միայն լայնքով ու ծրարի երկայնութեամբ կը տարբերի։ Երրորդ տեսակ բուրդով կը պատրաստուի պաճակ ապա կոչուածը որ այնչափ յարգի չէ ուրիշ հրատարակիներու վրայ։

Բեպիր ապան թէ՛ ներկուած վիճակի մէջ և թէ իր բնական գոյնով կրնայ գործածուիլ և ասոր համար երկու գոյն կ՛ըլլայ, մին թուխ, որ է իր բնական գոյնը, և միւսը յաճիվէրթի մուխ գոյն, որ վերջէն կը ներկուի։ Իսկ խպրդ ապաին աւելի գունատորը կը գործածուի և յարգի ալ է քան բնական թուխ գոյնը. գալով պաճակ ապա կոչուածին, ընդհանրապէս բնական գոյնով է որ կը ծախուի։

3. — Բուրդը մաքրելէն ետք իր տեսակին համեմատ պարկերու մէջ կը դրուի զատ զատ և կը ղրկուի գործիչին (հապաճ)։

4. — Բուրդերը գզելէ վերջ նորէն կը յանձնուին մանող կիներուն, որոնք էյիրմեճի կ՛ըսուին։

5. — Բուրդը մանող կիները, մանելու գործողութիւնը աւարտելէ ետք, փիլիճ կոչուած մանած բուրդին։ Այս գործողութեան կ՛ըսուի չիրիչկեմէ։

6. — Ցիլիճ եղած մանածները կը տրուին ոտայնանկ կիներու կամ աղջիկներու, որոնք չուշհալըճ կոչուած գործիքով կ՛աշխատին։

Ապան մինչեւ հոս, —բացի գզելու գործողութենէն—, իգական սեռի միջոցաւ կը գործուի և յետոյ կը յանձնուի բուն արհեստաւորին։

7. 8. — Երբ ապան ոտայնանկէն գայ, խանավաչոյէ տարբերութիւն մը չունի։ Արհեստաւորը նախ ծրար ծրար իր սեղանատախտակին վրայ առնելով գայն, կ՛սկսի դանակով փաճոկները մաքրել, որուն կ՛ըսուի ապա չեօփկեմէ։ Յետոյ իր վաճառած տեսակին համեմատ թէ՛ բեպիր ապաէն և թէ խպրդ ապաէն հարկ եղածին չափ ներկել տալու համար կը ղրկէ ներկարարին, ամէն մէկ ծրարի վրայ նշան դնելով։

9. 10. — Ներկէն գալէ վերջ, երեք տեսակ ապաներն

ալ հակերով կը ղրկուին տհնկ կոչուած գործատեղին, ուր ջուրով շարժող մեքենայի միջոցաւ բանավաչոյի վճռաւորին մէջ եղող ապան իր վերջնական վճռակը կ'ստանայ, այսինքն կը խտանայ, լայնքը կէս առ կէս կը նեղնայ, ծրարին երկայնութիւնը կէս առ կէս կը կարճնայ ու կէս սանթիմէթրի հաստութիւն մը կ'ստանայ: Տհնկէն գալէ վերջ չորցուելով երկրորդ անգամ դանակով կը քերթուի, և այլեւս բոլորովին կ'աւարտին պատրաստելու գործողութիւնները: Կը մնայ արհեստաւոր վաճառականին իր յաճախորդին ճաշակին համեմատ ձեւով կտրել ու կարել տալ:

Ապայի չինութիւնը բաւական դրամագլուխի կը կարօտի: Եթէ արհեստաւորն Օգոստոս ամսոյն մէջ ոսկի նախանիւթը եղող բուրդը ժողուել, յաջորդ Օգոստոս ամսուէն վերջ միայն կրնայ ծախել այդ նախանիւթով պատրաստել առած ապան, որովհետեւ բաւական ժամանակի կը կարօտի վերոյիշեալ գործողութիւնները կատարելը:

Տեղւոյս մէջ իրենց ձեռքով ապրանք պատրաստող առաջնակարգ ապահինեներն են Տէտրք Եազըճըզատէ հաճի Իսմայիլ և եղբայրք, Քէօյլիւեան կարապետ, Յակոբ Արզումանեան, Համբարձում Սրապեան, Յակոբ Խիւտավէրտեան, Աքսակալը զատէ Մուսթաֆա, Աբրամ Սալլակեան, կարապետ Քիւրքճեան:

Ի՞նչ է «Քըրնսի»ն

×

Ամերիկայի մէջ հնչուն դրամները և այն թուղթերը, զորոնք կառավարութիւնը և կամ կառավարութիւնէն արտօնուած պանքաներըը շրջաբերութեան հանած են ու իրր դրամ տարբեւտւի մէջ կը գործածուին՝ ըրնսի (currency) կը կոչուին: Միացեալ Նահանգաց ըրնսին տատնորդականի վրայ հիմնուած է, և այս պատճառաւ սովորաբար տասնորդական ըրնսի կը կոչուի:

Ամերիկայի դրամի միութիւնը տղարն է, որ տասնականս մասերու կը բաժնուի, ինչպէս.—

10 *միլ*	*կ'ընեն*	1	*սէնթ*
10 *սենթ*	»	1	*տայմ*
10 *տայմ*	»	1	*տօլար*
10 *տօլար*	»	1	*իկլ*

Հաշուեցոյցերու և ուրիշ գրաւոր գործերու մէջ փոխանակ սենթ, տօլար ևայլն գրելու, հետեւեալ համաուօտագրութիւնները կը գործածուին.

Միլ	M
Սէնթ	CT
Տայմ	D
Տօլար	S (1)
Իկլ	E

Առեւտրական գործառնութիւններու մէջ իկլ և տայմ չատ քիչ կը գործածուին : Միլ գլխաւորաբար պաշտօնական տեղեկագիրներու ևայլնի մէջ կը գտնուի միայն, և թուանշանները սապէս կը գրուին ու կը կարդացուին. —

S 82,565 *թիւը փոխանակ ըսելու 8 իկլ, 2 տօլար, 5 տայմ, 6 սենթ և 5 միլ, կը կարդանք 82 տօլար և 56½ սենթ :— Այսպէս. —*

S 18,725*ը կը կարդանք 18 տօլար և 72½ սենթ.*

S 24,837*ը կը կարդանք 24 տօլար 83 սենթ և 7 դենդի (2) կամ եթէ ըսուի 106 իկլ, 8 տօլար, 6 տայմ և 8 սենթ, պիտի գրենք* S 1068,68=*հազար վաթսունևութ տօլար, վաթսուն և ութ սենթ :*

Ամերիկեան դրամները տասնորդականի վրայ հիմնուած ըլլալուն, զանոնք հաշուելու մէջ ա՛և է դժուարութիւն մը չկայ, ա՛չ ալ մասնաւոր կանոն մը, ինչպէս. —

S 81,053, S 67,412, S 93,172 *և* S 14,38 *թուանշանները գումարելու համար, իրարու ներքեւ կը դնենք ու կը*

---

(1) S *նշանը վրան երկու չեզակի գիծերով* 8 *մ'է : Ամերիկայի մէջ տակաւին տօլար չգործածուած, 8 րէալ արժող պանիական դրամ մը կը գործածուէր, ուրկէ առնուած է տօլարի համաուօտագրուած այդ նշանը :*

(2) *Դենդի* (tenth) *անգլիերէն կը նշանակէ տասներորդ, այսինքն սենթին տասներորդը :*

գումարենք և արդիւնքը պիտի գտնենք $ 256,017, որ ճիշտ է։ Այսպէս կը հաշուեն նաև բարձումի, բազմապատկութեան և բաժանումի հաշիւները։

Սովորաբար հաշիւներու մէջ համաքանակ մասեր կը գործածուին և անհրաժեշտ է անոնց արժէքին ընտելանալ։

50	սեղի հաւասար է		$\frac{1}{2}$	տոլարի
$33\frac{1}{3}$	»	»	$\frac{1}{3}$	»
25	»	»	$\frac{1}{4}$	»
20	»	»	$\frac{1}{5}$	»
$12\frac{1}{2}$	»	»	$\frac{1}{8}$	»
10	»	»	$\frac{1}{10}$	»
$6\frac{1}{4}$	»	»	$\frac{1}{16}$	»
5	»	»	$\frac{1}{20}$	»

Ամերիկեան չափերը նման են անգլիականներուն, զորս ցոյց պիտի տանք երբեմն կարգին։

ՄԵՐ ԽՈՐԻՆ ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆԸ կը յայտնենք Ճիվէլէկեան ընտանիքին, Ձերիսեի շարիյէ և Սուրհանդակ լրագիրներու պատասխատէր Տիգրան Էֆ. Ճիվէլէկեանի մահուան առթիւ։ Հանգուցեալը 30 տարիէ ի վեր Օսմ. Մամլոյ կը ծառայէր և Միւթեվայիգի տասնհանգին և Օսմանիէ ու Մեճիտիէ պատուանշաններուն արժանացած էր։

Մեր Պատասխանները

Նշան եփ. Մկրեան [Տարէնտէ]. — Սատցանք 186 դրամ նամակադրոշմ և Բիւրակնի Բ. Շրջանին Ա. Թիւէն դրկեցինք երեք բաժանորդներու համար։ Ձեր Մեծիզին ալ դրկուեցաւ յանձնարարեալ ծրարով, որուն համար բան մը վճարելու պէտք չկայ։

Տէարէ Թադէոս կիւրեղեան եւ եղբ. [Սվազ]. — Ձեր բաժնեգինն ստանալով, նուէրները դրկեցինք Օսմ. Թղթատարութեան միջոցաւ։

Ցարութիւն եփ. վ. արդիկեան [Սամսոն]. — Բիւրակնի Բ. Շրջանին 7—8 թիւերը, նաեւ նուէրները դրկուեցան ձեզ։

Սահակ եփ. Պետրոսեան [Լուկիշէհիր]. — Բիւրակնի Ա. Շրջանին 30րդ թիւը, ինչպէս նաև Բ. Շրջանին 3—4 և 5—6 թիւերը դրկուեցան ձեզ։

ՊԱՆՔԱՅԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

CHAMBRE DE COMPENSATION

×

Լոնտոնի տեղանաւորական հրապարակն ունի իր Clearing-House*ը և Բարիզ՝ իր* Chambre de Compensation*ը, որ հիմնուած է* 1872*ին և կը բազկանայ* 11 *անդամներէ, որք են Պանք տը Ֆռանս, Քօնդուատ տ'էսքոնդ, Բէէմի Լիոնէ, Սօսիէդէ Ժէնէռալ, Բէէմի Ինտիւսդրիէլ է Քոմէռսիալ, Պանք տը Բաելի է տէ Բէյի Պա, Պլօա Լաֆֆոնթէն և ընկ., Օֆռուա և ընկ., Բէէմի Ֆռանսէ Լըհիաէօ և ընկ., Հանուօդ Որդինք և ընկ.:*

Ամէն օրուան գործառնութեանց հաշուեյարդարութիւնը կը կատարուի առտուան ժամը 9½*էն մինչեւ իրիկուան* 2½*:* *Գործառնութիւնները անձնատ թուղթերու վրայ կ'արձանագրուին և ո՛չ թէ տոմարներու մէջ, ինչպէս կ'ընէ Լոնտոնի* Clearing-House*ը: Այս թերթերը բաժնուած են հետեւեալ կերպով. —*

1. — *Պարտքի յատուկ թերթեր, որոնց վրայ չէքերն ու առեւտր. թուղթերը կ'արձանագրուին իւրաքանչիւր պանքայի գրասենեակին մէջ, Սենեկլին անդամակցող միւս պանքաներուն պարտքին կողմը: Սենեկլին պաշտօնեան ինք ալ պարտքի յատուկ թերթ մը ունի, որուն վրայ կ'արձանագրէ Պանք տը Ֆրանսի կողմէ ներկայացուած բոլոր հաշիւները, իւրաքանչիւր պանքայի պարտքին կողմը:*

2. — *Պահանջքի յատուկ թերթեր, որոնց վրայ չէքերն ու առեւտրական թուղթերը կ'արձանագրուին Սենեկլին պաշտօնէին կողմէ, ի ներկայութեան իւրաքանչիւր պանքայի ներկայացուցչին:*

3. — *Մասնաճիւղերու հաստուցմանց յատուկ թերթեր, որոնց վրայ իւրաքանչիւր պանքայի ներկայացուցիչը կ'արձանագրէ միւս պանքաներուն հետ իր հաշիւը:*

4. — *Ընդհանուր հաստուցմանց յատուկ թերթեր, որոնց*

վրայ Սենեկին պաշտօնեան կ'արձանագրէ իւրաքանչիւր պանքային հաշիւները։

5.— Սենեկին անդամներուն Պանք տը Ֆռանսի մէջ ունեցած անհատական հաշիւներու փոխանցման հրահանգներ, որոնք կ'արձանագրուին Սենեկին հաշուոյն պահանջքին կողմը։

6.— Պանք տը Ֆռանսի մէջ Սենեկին հաշուոյն եղած փոխանցումներու հրահանգներ, որոնք կ'արձանագրուին իւրաքանչիւր պանքային պահանջքին կողմը։

Այս հրամանագրերը Պանք տը Ֆռանսի մէջ կ'արձանագրուին միւս հրամանագրերուն պէս, որոնցմէ իրենց կանոնէ գոյնովը մէյն կը տարբերին։

Մինչ այս կարգի փոխադարձ հաստուցումներու տարեկան քանակութիւնը աւելի քան 225 միլիառ ֆր.ի կը հասնի Լոնտոնի Clearing-Houseին մէջ, և 240 միլիառի՝ Նիւ Եօրքի մէջ, Բարիզի Chambre de Compensationը տարին հազիւ 20 միլիառ ֆր.ի գործառնութիւն կ'ընէ։ Այսը պատճառը սա է որ Պանք տը Ֆռանս իւնք ալ կը կատարէ փոխադարձ հաստուցման այս գործողութիւնները, չնորհիւ վարդագոյն տոմսերու, զոր կը յանձնէ ընթացիկ հաշիւ ունեցողներուն։ Ասկից զատ, Բարիզի փոխանակութեանց մէջնորդներն ալ իրենց գործառնութիւնները կը հաւաստարակչռեն փոխադարձ հաստուցման դրութեամբ, չնորհիւ կապոյտ տոմսերու, զոր կը քաշեն Պանք տը Ֆռանսի վրայ։

ՍՈՒԱՋԻՆ ՄԱՍԸ. ՎԵՐՋԱՅԱՒ

Գ. ՄԱՍ

ՊԱՆՔԱՅԻ ՅԱՏՈՒԿ ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Պանքայի յատուկ հաշուակալութիւնը կը բաժնուի երեք մասի.— վիճակագրական, օժանդակ և ընդհանուր։

Վիճակագրական տոմարները, որոնք բազմաթիւ են պանքայի մէջ, բո՛ւն հաշուակալութենէն դուրս կը գտնուին,

բայց ո՛չ նուազ կարեւոր դեր մը կը կատարեն հակակշռի եւ տեղեկութիւն հայթայթելու տեսակէտով։ Այդ տոմարները կրնանք բաժնել վեց կարգի. —

1. — Արձանագրութեան տոմար, կամ ընդօրինակութիւն առեւտր. թուղթերու, որոնց իբրեւ օժանդակ կը ծառայեն ուրիշ բազմաթիւ տոմարներ, պանքային կարեւորութեան համեմատ։

2. — Վճարելի տոմարու տոմար։

3. — Պանքային կողմէ յանձնուած չեքերու։ հրաւիրագրերու եւ վարկագիրներու տոմար։

4. — Արժեքուղերու եւ կտրօններու յատուկ տոմար։

5. — Սնտուկի տոմար։

6. — Տեղեկութեանց յատուկ տոմարներ։

ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԵՒՏՐ. ԹՈՒՂԹԵՐՈՒ

Արձանագրութեան կամ առեւտր. թուղթերու ընդօրինակութեան տոմարը, որ երբեմն թուերու տոմար ալ կը կոչուի, պահուն ունի ցոյց տալ թէ ո՛րքան թուղթ մնած են պանքային մէջ եւ ո՛րքան դուրս ելածներն անկէ։ Այս առեւտր. թուղթերը յանձնարարելու կամ թղթակիցներու կողմէ ի հաշիւ վճարուելիք եւ զեղչուելու կամ դանձուելու համար որեւէ թուղթեր են։ Ամէն թուղթ, տոմարին մէջ արձանագրուած պահուն, կը քննուի, —որպէս զի անկանոնութիւն մը չունենայ—, կը թուագրուի, կը դրոշմուի, կ'ամբողջացուի եւ ներշուի։

Թուղթ մը թուագրելը կը նշանակէ անոր երեսին վրայ դնել այն թիւը որով արձանագրուած է տոմարին մէջ։ Այս կարգաթիւին չնորհիւ դիւրաւ կրնայ գտնուիլ առեւտր. թուղթը տոմարներու կամ նամակներու մէջ, առանց բո՛ւն առեւտր. թուղթը ձեռքի տակ ունենալու։ Ակնյայտ պատ, եթէ առեւտր թուղթը կորսուի, դիւրաւ կրնայ գտնուիլ վերադարձողին, քաշողին կամ վճարողին անունը, որով խոչոր կրկին օրինակ մը կրնայ հանուիլ։

Առեւտր. Թուղթ մը դրոշմելը կը նշանակէ անոր երեսին վրայ տպել պանքային անունը, երբեմն նաեւ թուղթին հրապարակ հանման թուականը, (այսինքն 3|5, (այսինքն 5րդ ամսուն 3րդ օրը)։ Ընդարձակ գործառնութիւն ունեցող պանքաներու մէջ թիւ մը կամ գիր մ'ալ կ'աւելցուի, որով առաջին տեսութեամբ կարելի կ'ըլլայ որոշել թէ այն առեւտր. թուղթը ո'ր տոմարին մէջ արձանագրուած է։

Առեւտր. Թուղթ մը ամրողջացնելը կը նշանակէ անոր ճիրոյին վրայ աւելցնել գործածուած փօսմիլը։

Առեւտր. Թուղթ մը նիշելը կը նշանակէ ձեռքով կամ կնիքով աւելցնել վճարման տեղը, վճարօրը և գումարը։ Այս գործողութիւնը կը դիւրացնէ առեւտր. թուղթ մը փընտռելու գործողութիւնը, և ուշադրութիւն կը հրաւիրէ մ'ըն թուղթին վրայ որուն պայմանաժամը մօտ է։

Այս նախնական աշխատութեան մէջ հոդ կը տարուի նաեւ երկու դասի բաժնել առեւտր. թուղթերը 1. — Տեղական կամ օտար հրապարակներու վրայ վճարելի և 2. — Պայմանաժամի կարգով։ Այս գործողութիւններն աւարտելէ ետք միայն մտից տոմարին մէջ կ'արձանագրուին թուղթերը։

Ահաւասիկ առեւտր. թուղթերու ընդօրինակութեան տոմարին նմոյշը. —

Մուտքի թուական,	մուտքի թիւ,	փոխանցող, տեղ,	ֆաշող,
Փետր. 27	2520	Այտինէ, Պրուսա,	Այտինէ,
վճարման տեղ,	վճարող,	գումար,	եղից թուական
Պոլիս,	Փետր. 24,	3000	Փետր. 25

Մեր պատասխանները

Խայիկ էֆ. Գարիպեան [Գուրտալէէն]. — Ստացանք 62 ղրուշի նամակադրոշմ վաղարշակ էֆ. Գարիպեանի բաժանորդութեան համար։ Ձեր այցաքարտն ու երկու դուլպայ և երկու թաշկինակ ընդունեցինք անշուշտ։

Առաքել էֆ. Բազումեան [Պազտատ]. — Ղազարոս էֆ. Ղազերեանէ ստացանք Ձեր բաժնեգինը և ղրկեցինք բիւրակնի Ա. Շրջանին 35 և 38 թիւերը։

գտնուած օտար նիւթերուն մէկ մասը դուրս կ'ելլէ: Ցետոյ կը գնեն փոսի մը մէջ ու կը թրջեն, մինչեւ որ ջուրն աղէկ մը ծծէ: 3—4 օրէն, այս թաց կաւահողը կը գնեն աւելի ալպտիկ փոսի մը մէջ և գործաւոր մը կ'ոկսի կոխկրտելով չաղվել: Երբ այս գործողութիւնն աւարտի, գործաւորը գետնին վրայ կը տարածէ կաւահողը, և նորէն կը չաղվէ ոտքով կամ տոփանի (թզմագ) միջոցաւ, ամէն անգամուն աւազ ցանելով վրան: Երկրորդ գործաւոր մը ձեռքով կը չաղվէ և ուղտած մնծութեամբ կտորներու կը բաժնէ: Այն ատեն, կաղապարող գործաւորն այս կտորները կը դնէ փայտէ կամ երկաթէ կաղապարներու մէջ, աւելորդ մասը մէկդի կ'ընէ և աղիւսը դուրս հանելով կը դետեղէ յատուկ տախտակի մը վրայ զոր ուրիշ գործաւոր մը կ'առնէ կը տանի կալատեղը (հարմանի) և հոն արեւուն տակ կը դնէ աղիւսը, զոր ա՛յն ատեն միայն փուռը կը նետեն երբ աղէկ մը չորցայ: Կաղապարող վարպետ գործաւոր մը և օգնականը օրական մինչեւ 3000 աղիւս կրնան պատրաստել այսպէս: Մեքենաներով չաղվելու և կաղապարելու գործը աւելի կատարեալ և աւելի արագ կ'ըլլայ, բայց մեծ ծախքի կը կարօտի: Ահագին սպասումի ունեցող գործարաններու միայն կը յարմարի: Ցեզական աղիւսները դրեթէ միօրինակ են, բայց եւրոպայէ եկած աղիւսի տեսակները խիստ շատ են: Սովորական աղիւսները 22—27 սնտմ. երկայնութիւն, 10—17½ լայնութիւն և 4—7 թանձրութիւն ունին: Անգլիական ըուած աղիւսները խոշոր և թեթեւ են: Սալայատակի համար գործածուած աղիւսները, որք ամէն բախումի դիմանալու են, միւսներէն շատ աւելի խնամքով կը պատրաստուին: Վաւազոյնները կուգան Պուրկօնեըէ: Այս աղիւսներուն լաւ տեսակէ ըլլալն հաւկնալու համար ժամու մը չափ կը դնէք տաք ջուրով ամանի մը մէջ: Եթէ անոնց ինչ ինչ մասերն անջատուին, վարնոց տեսակէ են: Ընդունարաններու և ջրմուղներու յատուկ աղիւսներն ամէնէն կարծր և ամէնէն ծանր աղիւսներն են: Անկէզ աղիւսները, որք փուռերու և հնոցներու չինութեան համար կը գործածուին, պէտք

է դիմանան խիստ տաքութեան։ Կը չինուին կարելի եղա-
ծին չափ զուտ կաւահողէ։ Լաւագոյն տեսակները կուգան
Մօնդէլէ, Մէյլօնայէ (Մէձի մօտ) և Պուրկօնեըէ։ Անկէզ Ա-
դիւանները սովորաբար միւսներէն 25% աւելի կ'արժեն։ Գո-
գաւոր աղիւսները, զոր 1849ին հնարեց Պօռի անուն մէկը,
թեթեւ, խնայողական ու դիմացկուն են և տաքութիւն կամ
խոնաւութիւն չեն հաղորդեր։ Կը գործածուին թեթեւ շէնք-
քերու համար, ինչպէս առաստաղ, կամար, միջնորմ եւլն.։
Գոգաւոր աղիւսները կարելի եղածին չափ քիչ ծեփով կամ
շաղախով կը միանան իրարու։ Լաւագոյն տեսակները կը
չինուին Վօժիւարի, Մօնշանէնի մէջ եւլն.։ Կուրլիէյի բո-
լորակ աղիւսները կը գործածուին պատերու մէջ վառարա-
նի խողովակներ չինելու։ Յիշենք նաեւ ապակուած (աղրղը)
աղիւսները, որք ջրամբարներու և ջրմուղներու համար կը
գործածուին։ Կան ուրիշ կարգ մը աղիւսներ ալ, որոց չի-
նութեան մէջ կաւէն զատ ուրիշ մարմիններ ալ կը մտնեն։
Հոդանեական ըսուած աղիւսները կը չինուին այնպիսի կա-
ւով, որուն մէջ քուարցային (կարծր քար մը) աւազ խառ-
նուած է։ Ծակոտկէն ըսուած աղիւսները փայտաքար եւ
փայտի փոշի կը պարունակեն։ Փորձուեցաւ նաեւ աւազա-
քարէ և ճենապակիէ գոգաւոր աղիւսներ չինել, որք իրաւ
է թէ շատ կը դիմանան, բայց սուղի կը նստին։ Սունկէ
(մանթար) աղիւսները կը չինուին փոշիացած սունկով կամ
հին խցաններու կտորաւանքով և կիրով։ Այս աղիւսներ շատ
կը դիմանան, խոնաւութիւնը կը վանեն և իրենց թեթեւու-
թեան համար շատ բաներու կը գործածուին։ Մէկ խորա-
նարդ մէդր պատի համար 400 գերմանական, 300 աւստրիա-
կան, 495 հոլանտական, 630 ֆրանսական, 600 տեղական
աղիւս կ'երթայ։

*Տեղական աղիւսի ճարտարութեան մասին աւելի ընդար-
ձակ տեղեկութիւններ՝ ԿՂՄԻՆՏՐ բառին մէջ։*

Ա.ղ.կեր.— (*Սարտէլա պալըղը*).— Ֆրանսերէն sardine, անգլիերէն pilchard, գերմաներէն sardelle, իտալերէն sardine։— Ովկիանոսի ազկերները մինչեւ 26 սնդմ. երկայնութիւն ունին, իսկ Միջերկրականի մէջ գտնուածները 18 սնդմ. ը չեն անցնիր։ Ամէնէն փոքրիկ ազկերը ձմեռն Գերեան

կ'երևնէ։ Ովկիանոսի մէջ ո՛չ, բայց Միջերկրականի մէջ կան տեսակներ որք միայն 25 հազարորդամէդը երկայնութիւն ունին։ Աղկերը գլխաւորապէս և առաւօրէն կ'օրսացուի Անգլիոյ, Սպանիոյ, Բորդուկալի եզերաց վրայ և Միջերկրականի մէջ։ Թարմ կը ծախուի անմիջական սպառման համար կամ մեծ մասամբ կը յանձնուի պահածոյ ուտելիք պատրաստող գործարաններուս, որք կ'աղեն ու տակառներուս մէջ դնելով կը ծախեն։ Փոքր մաս մ'ալ յատուկ գործիքներուս մէջ կը ճնշուի, լուսաւորութեան յատուկ իւղ մը հանելու համար։ Այս ճարտարարուեստը բախտի կապուած բան մ'է, վասն զի աղկերը մերթ հազուագիւտ կը դառնայ ու մերթ յանկարծ ահագին քանակութեամբ կը խուժէ։ Գինն ալ շատ փոփոխական է։ Երբեմն 1000 հատն 150 ղրշ. կ'արժէ ու երբեմն 15 ղրշ.։ Աղկերը վաչկատուն ձուկ մ'է։

Աղած ու չորցած ձուկերուս վրայ շատ կարեւոր գործեր կ'ըլլան Պոլսոյ Պալըք բազարի հրապարակին վրայ։ Տեղացիներն սպառումէն զատ տարին իբր 200,000 ոսկիի վաճառք կ'արտածուի Յունաստան, Պուլկարիա, Ռումանիա։ Առնոց մեծագոյն մասը կը պատրաստեն Պոլսոյ խավիարճիները։ Տարբեր համեմատ մեծաքանակ թորիք, բալամուտ, սթաւրիտ, սկումբրի, քօլիոս, խամսի, սթիէշ պալըղը, եըլան պալըղը, ծովատեղա կ'աղեն ու տակառներով կ'արտածեն վերջվիշեալ երկիրները։

Այս տեղական վաճառքներէն զատ, օտար երկիրներէ ալ աղած ու չոր ձուկեր կը ներածուին, սակայն բաղդատաբար աննշան քանակութեամբ։ Տարին 30,000 ոսկիի ռենկա, անչուէզ, սարտելա, լիգորինոս, և մօրիւ կուգայ Իտալիայէ, Ֆրանսայէ, Ռումանիայէ, Ռուսիայէ և մինչեւ իսկ Հոլանտայէ և Անգլիայէ։

Ամսազոն. — Թեթեւ ու ողորկ կերպաս մը, որով կիներուս շրջազգեստ կ'են. կը չինուի։ Հիւսուածոյ մ'է, որուն թեզանն ու առէջը սովորաբար գղուած անլուայ բուրդի թելերէ կը պատրաստուին։ Այսու հանդերձ, մէջին և տորին տեսակ տեսակ ամազոններ ալ կը չինուին ամբողջուած բուրդէ առէջով։ Ամազոն կերպասը, որ ամէնէն առաջ ձիաւոր կիներուս պէտքի համար գործածուած է—և ասկէ առած է ամազոն

անունը—, ընթացիկ գործածութեան մէջ մնաւ։ Այսօր ա-մէն տեսակ շրջագիտական ու մանրօճներ կը շինուին անով։ Ֆրանսայի մէջ, այս կերպասին արտադրութեան գլխաւոր կեդրոններն են Սրասան, Էլպէօֆ, Լուվիէ, Վիս, եւն.։ Կա-րեւոր գործարաններ կան նաեւ Ռէնի, Սաքսի, Պոհեմիոյ և Պելժիոյ մէջ։ Ամպոնի սովորական լայնութիւնն է 130 սնտմ. և մէդրոն, տեսակին համեմատ, կ'արժէ 3½—8 ֆրանք։

Ամասիա [ասիա]. — Սվազի վիլայէթին չորս սանճագ-ներէն մին է։ Ունի 24,450 քառ. քիլօմէթր տարածու-թիւն և և 260,000 բնակիչ։ Ամասիոյ սանճագը բաժնուած է հետեւեալ եօթը ֆազաներու, որոնք 12 ճահիչ և 733 գիւղ ունին, վերջին Սալնամէին համաճայն։

Ա. Ամասիա (اسیا), 67,000 բնակիչ։ Ունի չորս ճա-հիչ՝ Էզինէ Բազար, Ջարէ, Ալէվի, Մորիք և 137 գիւղ։

Բ. Մարզուան (بفزمر), 34,000 բն.։ Ունի մէկ ճահիչ՝ Լուշտիկէն և 63 գիւղ։

Գ. Քէօփրիւ (كوپرو), 27,000 բն.։ Ունի մէկ ճահիչ՝ Կէօլ և 176 գիւղ։

Դ. Կիւմիւշ Հաճի Քէօյ (كوموش حاجى كوى), 25,000 ունի եր-կու ճահիչ՝ Սըյրանճըդ, Ջայ և 54 գիւղ։

Ե. Լատիկ (لادیك), 43,700 բն.։ Ունի մէկ ճահիչ՝ Ֆա-րասամալ և 80 գիւղ։

Զ. Հավզա (حوضه), 28,000 բն.։ Ունի մէկ ճահիչ՝ Ֆա-րախալիլ և 84 գիւղ։

Է. Մէհլիտէօղիւ (ايوادجه), 24,500 բն.։ Ունի երկու ճա-հիչ՝ Օրթաքէօյ, Շէյխմահմուտթաֆա և 139 գիւղ։

Ամասիա Սվազի հիւսիսային արեւմտեան կողմը կը գտնուի՝ Սեւ ծովէն 10 քլմ. հեռու։ Ծովեզերքի ամէնէն մօտ քաղաքն է Լատիկ, որ Սամսունէն 15.5 քլմ. հեռաւորու-թիւն ունի, իսկ Սամսունէն Ամասիա 171 քլմ.է։ Սահմանն է հիւսիսէն Գաստէմունիի և Տրապիզոնի վիլայէթները, հարաւէն Էնկիւրիի վիլայէթն ու Թօքատի սանճաքը, Արեւմուտքէն Գաստէմունիի և Էնկիւրիի վիլայէթները, Արեւելքէն Տրա-պիզոնի վիլայէթը և Թօքատի սանճաքը։ Օդը առողջ է, բայց ճախճախուտ վայրերէ։ Ծովէն բարձրութիւնն է 450, իսկ

նոյն վիլայէթին մէջ Թոքատ 650 և Սվազ 1302 մէթր բարձրութիւն ունին։

Լեռ. — Ամասիոյ գաւառին մէջ գլխաւոր լեռներն են, հարաւային կողմը Ամատալ լեռը, արեւելեան կողմը Պէլ տաղ լեռը (2500 մէթր բարձրութիւն), հիւսիսային կողմը Քէմէր տաղ և Ագ տաղ (2200 մէթր բարձրութիւն)։

Ամառան. — Լաւիկ գաւառին շրջակայքը կապնիլ, հաճարի (գայրն) անտառներ կան։ Մարզուան, Հաճի—քէօյ և Հաւզա գաւառներուն մէջ Թաւշան տաղի բարձունքին հիւսիսի նայող զառիվարին վրայ մեծաքանակ կաղնիի և հաճարի ծառեր կան, իսկ հարաւային զառիվարին վրայ կը գտնուին ամէն տեսակ կոնարեր ծառեր, բացի սերվիի ծառերէն։ Միևնոյն տեսակէ ծառեր կը գտնուին Ամասիոյ գաւային Ագ տաղ լեռան անտառներուն մէջ։

Անասուն. — Աւստա որսի կենդանիներ կան Ամասիոյ անտառներուն մէջ։ Ինչպէս որ անունը կը ցուցնէ, Թաւշան տաղէն վրայ բազմաթիւ նապաստակներ կան, նաև եղջերուներ, վայրի խոզեր և արժէքաւոր մորթեր ունեցող տեսակ տեսակ վայրի կենդանիներ։

Հանքեր. — Ամասիոյ սանճագը հարուստ է հանքերով։ Հոն կը տեսնուին բազմաթիւ երկաթի, պղինձի և արծաթախառն կապարի հանքերակներ։ Թաւշան տաղէն կողքերուն վրայ կը գտնուին փայտածաղրի հանքեր։ Կան նաեւ ծծմբային և կարեւոր հանքային ջուրերու ազբերակներ։ Նշանաւոր են Հավզայի ջերմուկները, ուր տարւոյն մէջ հինգ ամիս՝ Մայիսէն մինչեւ Սեպտեմբեր՝ շրջականերէն մեծ բազմութիւն մը կը յաճախէ։ Ջուրը կը պարունակէ պիհարպօնաթ սօտիւմ նիւթեր, և տաքութիւնն է + 45° Ռէօմիւռ, այսինքն + 57° հարիւրամասն։

Գետ. — Հետեւեալ հինգ գետերը կը հոսին Ամասիոյ սանճագին մէջէն.— Գըզըլ ըրմաք, Թօզանլը սու, Զէքէրէք չայ, Թէրս աքան, Տէվլի չայ։ Հարիւրաւոր առուներ, վտակներ, գետակներ ու գետեր կը հոսին երկրին մէջ, և շրջաններ ու դարձուածներ ընելով կը միանան վերոյիշեալ գետերուն։

Լիճ. — Ամասիոյ մէջ լիճ մը միայն կայ, Լաւիկ լիճը՝ համանուն գաւային մէջ։ Ձմեռն երբ ձիւները հալին, Լաւիկ 11 քիլոմէթր երկարութիւն կ'ունենայ։ Իսկ ամառը 3 քիլո-

մէթր երկարութիւն կ'ունայ և միւս մասը անանցանելի եղեգներով ծածկուած ճահիճ մը կը ձեւանայ։ Լատիկի շրջակայքը գեղեցիկ արօտատեղիներու գօտի մը կը կազմուի, ուր մեծաքանակ արջառ կ'արածեն։ Այս լճին մէջ կ'որսան շատ մը խոշոր գայլաձուկ (թուռնա պալըղը) և ընտիր խեցգետին։

Երկրագործութիւն. — Ո՛չ միայն Սվազի վիլայէթին, այլ նաեւ բովանդակ Ասիական Թուրքիոյ մէջ նշանաւոր է Ամասիոյ սանճագը, որ պատասխանատուութեան կողմէ։ Հոն բարեխառնը կլիմայի յատուկ ամէն տեսակ բոյսեր կ'աճեցնէ, երկրագործական բոլոր արտադրութիւններն ալ ընտիր են։ Երկրին մէջէն հոսող առատ ջուրերն ու գետերը մեծապէս օգտակար են այս սանճագին հողագործութեան։ Ամասիոյ կարծր ցորենը բացառիկ կերպով ընտիր տեսակէ է, ու մի միայն այս յատկութեանը համար է որ կարելի կ'ըլլայ զայն արտածել հեռաւոր վայրեր և վոխադրութեան սուղ վարձքերը վճարելէ յետոյ շահ մ'ալ հանել։ Բացի ցորենէն, կ'արտադրուին կարեւոր քանակութեամբ և լաւագոյն որակով գարի, վարսակ, հաճար, եգիպտացորեն, կորեակ, լուբիա, բակլայ, եւայլն։ Մշակուած ճարտարարուեստին բոյսերուն մէջ նշանակելի են ածիլոնը, քթանը, *fիքրեն* և ձեհրին։ Ունի ընտիր տեսակէ բանջարեղէններ և պտղատու ծառեր, որոնց մէջ համբաւաւոր են պամբեան ու խնձորը։ Աւելորդ է ըսել որ այս երկու արտադրութիւնները մեծապէս արժանի են իրենց համբաւին։ Ամասիոյ խաղողը գեղեցիկ է ու համեղ, և ընտիր գինի կը շինուի անով։ Այս գինին 15% ալքօլ կը պարունակէ, որ բաղդատելով եւրոպական նշանաւոր գինիներուն հետ, կը գերազանցէ Բօնոթանոը, Մատէռան, Մառսալան, իսկ Շամփթաժի և Պօռտոյի ճերմակ գինիները աւելի ալքօլ կը պարունակեն քան Ամասիոյ խաղողէն պատրաստուածները։

Արջառ. — Ամասիոյ սանճագին մէջ կը բուծանին 15,000 եզ, 5000 կով, 10,000 ձի, 4000 էշ, 153,500 ոչխար և 18,500 այծ։

Ձարտարութիւն. — Ոտանաւանկութիւնը Ամասիոյ սանճագին մէջ ամէնէն աւելի ծաւալած ճարտարութիւնն է։ Ամասիոյ և Մարզուանի խազաներուն մէջ 5—6000 գործաւեզան շարունակ կը բանին, տուլուկ ըսուած գծաւոր և դու-

նաւահանգիստ մը կը չինեն, որու համար տարին 10—12,000 հակ մանած կ'ապահովի: Ոտոպնանկութենէն ետքը կուգայ ազօթեպանութիւնը: Բաւական տարիէ ի վար առաջ, Զուիցերացի մը՝ Մ. Բրուկ՝ մեծ չանքերով յաջողեցաւ զարգացնել այս ճարտարութիւնը Ամասիոյ մէջ, ուր բազմաթիւ ազօրիներ կան այժմ, քանի մը հատը չոգեշարժ, և որոնցմէ չատեր լաւագոյն և կատարեալ գործիքներով կազմուած են և կրնան արտադրել տարին 200,000 պարկ ալիւր: Մ. Բրուկ Ամասիոյ մէջ լուցկիի գործարան մ'ալ հաստատած է, բայց օտար արտադրութեանց հետ անկարող ըլլալով մրցելու, չէ յաջողած:

Վաճառականութիւն. — Ամասիոյ սանճագը տարին մերձաւոր հաշուով 400,000 Օամ. ոսկիի առեւտրական շարժում ունի, որուն $^3/_8$ը արտածութիւն և $^3/_8$ը ներածութիւն է: Արտածելի գլխաւոր վաճառքներն ու անոնց արժէքն են. —

	1900	1905
Ցորեն	30,000	46,000
Գարի	10,000	7,000
Աֆիոն	8,000	24,000
Ալիւր	120,000	85,000
Խոզակ	13,000	12,000
Վարսակ	5,000	4,500
Այծի մորթ	3,000	6,500
Թիֆթիկ	4,000	8,000
Խաչխաշ	2,000	6,000
Տուլուկ	25,000	24,000
Պամբակ	12,000	8,000
Պտուղ և կնդնք.	18,000	19,000
	250,000	250,000

Ներածելի գլխաւոր նիւթերն են մանած, մանիֆաթուրա, երկաթ, քարիւղ, շաքար, սուրճ, խուրտավաթ, են.:

Հաղորդակցութեան միջոցներ. — Ամասիոյ սանճագին նաւահանգիստը Սամսոն է, հեռաւորութիւններն են Սամսոնէ Մարզուան 12 ժամ, Մարզուանէ Ամասիա 20 ժամ: Այս սանճագին հօրթը գազաներուն կեդրոնէն՝ Ամասիայէ ուներեցած հեռաւորութիւնն է, Լատիկ 7, Մարզուան 8, Հավ-

զա 10, Մէհմա Էօզիւ 11, Վէզիր քէօբրիւ 12, Կիւմիւշ մատէն 12 ժամ։ Իսկ սանճագին վիլայէթէն ուղ նեցած հեռաւորութիւնն է, Ամասիայէ Թոքատ 20, Թոքատէ Սվազ 22 ժամ։ Ամասիոյ մէջ 475 քիլօմէթր կառուղի կայ, որու ճիւղերն ու հեռաւորութիւններն են Ամասիա—Թոքատ 42½, Ամասիա—Սամսոն 65, Լատիկ—Սամսոն 151½, Սամսոն—Զորում 66, Ամասիա—Զորում 73, Ամասիա—Թօսիա 141, Հավզա—Սինոպ 49, Հաճիքէօյ—Կիւմիւշքէօյ 6, Զիլէ—Ամասիա 7, Բօլայէլթիկ 10 քիլօմէթր։

Երկաթուղիք. — Երկու գիծերու ծրագիրներ կան, որոնք եթէ գործադրուին, երկուքն ալ Ամասիայէ պիտի անցնին։ Մին՝ Սամսոն—Սվազ, որ պիտի անցնի Սամսոն—Մարզուան—Ամասիա—Թոքատ քաղաքներէն, միւսը՝ Սինոպ կամ Սամսոն — Եումուրթալըք, որ Սինոպէ կամ Սամսոնէ պիտի սկսի և անցնի Մարզուան—Ամասիա—Թոքատ—Սվազ—Գայսէրի—Նիյսէ—Ատանա քաղաքներէն և պիտի կցուի Եումուրթալըքի, որ Իսկէնտէրունի և Մէրսինի միջև նաւահանգիստ մ'է, Միջերկրական ծովու վրայ։ Եթէ այս գիծերէն մին, ո՛րն ալ ըլլայ, շինուի, բնականաբար Ամասիոյ վաճառականութիւնը ու երկրագործութիւնը մ'ալ աւելի պիտի զարգանան։

[Այս սանճաքին վերաբերեալ ուրիշ լրացուցիչ տեղեկութիւններ տեսնել ՍՎԱՋ բառին մէջ]։

Ամէն. — Գաւառ։ Ախորժակ բացող ըմպելի մը նկատուած է։ Կը պատրաստուի ալքոլի մէջ թրջուած նարնջի և մանուարինի կեղեւներով։ Առողջաբանք կը հակառակին այս ոգելից ըմպելիին գործածութեան, որովհետեւ ամէն չինողները շատ անգամ ամենազէշ տեսակէն ալքոլ կը գործածեն, վստահ ըլլալով թէ հեղուկին գառն համէն յայտնի չըլլար ալքոլին վարնոց տեսակը։ Միայն Ֆրանսայի և Հոլանտայի մէջ տարեկան 100,000 հարիւրալիտր ամէն կ'սպառի։

Ամուէն. — Գլխաւոր քաղաք Սօմի նահանգին։ Բաւրիզէ 132 քիլօմէդր հեռի։ Բնակիչ 90,000։ Էապէս ճարտարդործ քաղաք։ Բամբակի հինգ մանարաններուն մէջ 90 հազար չամիրակ (իլ) և 4,000 գործաւեղան՝ բամբակէ թաւիշներու չինութեան համար։ Պատրաստ զգեստներու ճար-

ԴԱՍԸՆԹԱՑՔ

Գերմաներէն Առեւտրական Լեզուի

ԳԱՍ

ՀԱՏՈՒԱԾ Բ.

— ԴԱՍ 4. —

Das Rundschreiben
Տ-- ---նդ-ր-յկէն
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Wir beehren uns, Ihnen hiermit anzuzeigen,
Վէ- պէե-էն ---ն էէն հէ-ռ-ը- ---ց-յկէն
Մենք կը պատուենք մեզ ձեզ այսու իմացնել

daſs wir heute auf hiefigem Platze unter der
դ-- վէ- հ-յ-ր ---ֆ հէշէ-ն-կ-ց բ-ց-յ- ---ն-ր- պ-ո
որ մենք այսօր վրայ հոս հրապարակ տակ մը

Firma. . . ein Kommiſſions- und Speditions- geſchäft
ֆ-ր-ա ---յն ւ-ջ-ք-ջ-ն- ---ե- ղբե-ո-ջ-ջ-ն- կ-շ-ֆ-ը
անուն մէկ յանձնառական և առաքման գործ

errichtet haben, daſs ſich auffchlifflich mit dem
է-կ-ը-ր-ը հ---պ-ն դ-ս- ղ-ի- ---ա-շ-է-ւ-ի- ժ-- պ-ժ
հիմնած ունենք որ զինքը միմիայն . . .ով

Vertriebe von wiener Waren befaſſen wird·
ֆ-ր-ր-ւ-ե ջ-ձ ժ-ն-ր- վ-ռ-ն պ-ֆ-ռ-ն ժ-ռ-
վաճառում վիեննայի վաճառքներու զբաղի պիտի

Wieljährige Erfahrungen(1) in dieſem Handelſzweig,
Յ-լ-է-ռ-կ-ն է-ֆ-ռ-ռ-ն-կ-ն ի- դ-ղ-ժ հ-ն-պ-ե-ց-վ-ժ-կ
Բազմամեայ վարձառութիւնք մէջ այս առևտուրի ճիւղ

hinreichende Mittel, ſowie unſere Verbindungen mit
հինռայխենդե միլել ղովի ռունեռ ֆռոկնռունկեն միլ
բաւական միջոց լինչպէս նաև մեր յարաբերութիւնք հետ

den hauptſächlichſten, letzen uns in ſtand. das
դեն հռռբլռենելիռլեն լեցեն ռռն ին շռռնդ ռռռ
ամէնէն գլխաւոր կը դնեն զմեզ ի վիճակի զ...

Intereſſe derer, die uns mit ihren Aufträgen
ինթերեսե դեռե դի ռռն միլ իռեն ռռֆթռենկեն
շահը անոնց որ մեզ հետ իրենց առաքանքն

erfreuen wollen· ſorgfältig wahrzunehnen,
եռֆռոյեն վոլեն զոռկֆելթիկ վառցռնենգեն
պատուել ուզել խնամքով տեսնել

(3)Indem wir Sie erſuchen von unſer
ինդեմ միռ զի եռզռխեն ֆոն ռռնռե
...ով մենք ձեզ խնդրել ...ը մեր

nachſtehenden Unterſchriften gefälligſt Bemerkung
նռխշթեհենդեն ռնթեռշրիֆթեն կեֆելլիկռթ պեմեռկռնկ
ստորև գտնուած ստորագրութիւնք հաճութեամբ դիտողութ.

zu machen, empfellen wir uns.2) Ihnen
ցռ մռխեն եմբֆելեն վիռ ռեռ իհեն
...ու ընել կը յանձնարարենք մենք մեզ ձեզ

Mit Hochachtung
Միթ հոխռխռռնկ
...ով յարգանք

Պատիւ ունինք այսու ծանուցանել ձեզ թէ մեր հրապարակին վրայ ... անունով յանձնակատարութեան տուն մը հիմնեցինք, որ միայն վիեննայի արտադրութեանց վաճառումով պիտի զբաղի:

Այս գործին մէջ բազմամեայ փորձառութիւն և բաւա-

կան դրամագլուխ ունենալով, ինչպէս նաև գվխաւոր գործառնութեանց հետ յարաբերութեան մէջ ըլլալով պիտի կըրնանք խնամով կատարել ապագայ յանձնարարութիւնները անոնց սրանք պիտի հաճին պատուել մեզ։

Խնդրելով որ ծանօթանանք մեր յեռապայ առաջարկութեան, յարգանօք կ'ողջունենք զձեզ։

---

(1)Գերմաներէնի մէջ շատ մը գոյականներու ծայրը en աւելցնելով յոգնակի կ'ըլլայ. ինչպէս, վերոգրեալ նամակին մէջ կը տեսնենք

Erfahrung փորձառութիւն	Erfahrungen փորձառութիւններ
Verbindung յարաբերութ.	Verbindungen յարաբերութիւններ
Bemerkung դիտողութիւն	Bemerkungen դիտողութիւններ
Ware վաճառք	Waren վաճառքներ
Unterſchrift ստորագրութ.	Unterſchriften ստորագրութիւններ

e, in, heit, keit, ſchaft, ung *վերջաւորակ գերմաներէն*, at, ant, ent, or *վերջացող օտար և միավանկ իգական բառերն* en *վանկով յոգնակի կ'ըլլան. ինչպէս. —*

der Kunde յաճախորդ	die Kunden յաճախորդներ
die Verkäuferinկին յաճախորդ	die Verkäuferinnen յաճախորդներ
die Neuheit նորութիւն	die Neuheiten նորութիւններ
die Gefälligkeit հաճութիւն	die Gefälligkeiten հաճութիւններ
der Advokat փաստաբան	die Advokaten փաստաբաններ
der Präſident նախագահ	die Präſidenten նախագահներ
der Doktor բժիշկ	die Doktoren բժիշկներ
die Zeit ժամանակ	die Zeiten ժամանակներ
die Zahl թիւ	die Zahlen թիւեր

(2)Sich *դերանուն է, կարգ մը բայեր կան որ այս դերանունով միասին կը խոնարհուին, ինչպէս. —*

ſich freuen ուրախանալ	Sie freuen ſich կ'ուրախանաք

ich freue mich կ'ուրախանամ wir freuen uns կ'ուրախանանք
er frent sich կ՝ուրախանայ sie freuen sich կ'ուրախանան

---

ich freute mich կ'ուրախանայի wir freuten uns կ'ուրխանայինք.
er freuten sich կ'ուրախանար sie freuten sich կ'ուրախանային
Sie freuten sich կ'ուրախանայիք

---

ich werde mich freuen պիտի ուրախանամ
er wird sich freuen պիտի ուրախանայ
wir werden uns freuen պիտի ուրախանանք
sie werden sich freuen պիտի ուրախանան
Sie werden sich freuen պիտի ուրախանաք

Ինչպէս կը տեսնուի, ich *եսին քով* mich, wir *մենիին քով* uns, *իսկ միացեալ դէմքերուն հետ* sich *դերանունը կը դըրուի*, *ինչպէս*. —

sich beehren պատուել, պատիւ ունենալ — wir beehren uns պատիւ ունինք
sich befassen զբաղիլ — das sich befassen wird nr պիտի զբաղի
sich empfehlen զինքը յանձնարարել, ողջունել — wir empfehlen uns Ձեզ կ'ողջունենք.

---

(3) *Գերմաներէնի մէջ* indem *բառը երբ բայի մը քով դրուի Հայերէն ով վերջաւորութիւն կուտայ բային*, *ինչպէս*. —

erſuchen խնդրել — indem wir Sie erſuchen ձեզ խնդրելով nr
beſtätigen հաստատել — indem wir beſtätigen հաստատելով
hoffen յուսալ — indem wir hoffen յուսալով nr

ԴԱՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ
×
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ Բ. ԴԱՏԱՐԱՆ

12 ՓԵՏՐՈՒԱՐ

Թուղթի վաճառական Վ. Մաեօխա և Ն. Ֆրէնքօ ընկերութիւնը, որ 1906 Նոյեմ. 22ին սնանկութիւն հրատարակած էր, Յունուար 22ին յաջողեցաւ քօնքօրտաթօ մը կնքելու։ Սակայն պահանջատէրերէն պանքէտ Մ. Թօլէտոյի կողմէ, փաստաբան Ֆէնալ էֆ. առարկութիւններ կ'ընէր այդ քօնքօրտաթօյին դէմ և կը խնդրէր դատարանէն որ լուծէ զայն սա պատճառներով. — Նախ՝ պէտք է որ ըստ օրինի սնանկին տետրակները կնքուին, սէնտիքներուն յանձնուին և առնք պիտանիչօ մը պատրաստեն տետրակին պարունակութեան համաձայն ու զայն ներկայացնեն ժիւժ ֆօմիհէրին։ Մաեօխա—Ֆրէնքօ ընկերութեան սնանկութեան մէջ պիտանիչօն գրուած է սնանկին յայտարարութիւններէն առնելով։ Մայր տոմարի առաջին էջին մէջ նշանակուած է որ գործին երեք ընկերներէն մին՝ Ն. Մաեօխա 330 ոսկի դրամագլուխ դրած է, բայց սնանկութեան գործին մէջ այս անձը իբր անպատասխանատու մէկը բացը թողուած է, և այս կերպով մեծ վնաս մը պատճառուած է մասայինն։ Երկրորդ՝ սնանկին գոյքը գրելու և գնահատելու գործին համար լսուեցաւ որ չատ մը վաճառք տետրակը չեն անցուեր և դատարան դիմելով այս մասին բողոքուեցաւ, կրկին գրի առնուեցան վաճառքները և մեծ տարբերութիւն մը տեսնուեցաւ երկու հաշիւներուն արդիւնքին մէջ։ Առաջին անգամ սնանկին վէզիր խանի մէջ ունեցած մթերանոցի վաճառքը բնաւ հաշուոյ չէր անցած։ Երկրորդ անգամ ալ, սնանկին յայտարարութեան միայն անսալով, 300 ծրար թուղթ տետրակը գրուած էր, ինչ որ հակառակ է ուղիղ դատողութեան, և կարելի չէ մտածել որ վաճառական մը 300 ծրար թուղթի համար մթերանոց վարձէ։ Երրորդ՝ թահիիրը տուեալը օրինաւոր կերպով չէ եղած, որովհետեւ սնանկութենէն քանի

մը օր առաջ, 300 ոսկինոց մուրհակ մը հօրը, 114 ոսկինոց մուրհակ մը անոր որդւոյն և 600 ոսկիէ մուրհակ մ'ալ կնոջը տուած է անանկը, որոնք ընդունուած և արձանագրուած են պարտուց մէջ, առանց քննելու անանկին տեարակները, տեսնելու համար թէ հոն գոյութիւն ունի՞ն անոնք թէ ոչ։ Զորրորդ՝ օրէնքը կը տրամադրէ որ քօնքօրտաթօն ստորագրողներուն թիւը վերջնականապէս ընդունուած պահանջատէրերուն թուոյն կէսէն աւելի ըլլայ։ Օրինական այս կէտին մէջ ալ դանցաուութիւն եղած է։

Նախագահը հարցուց Շէքիպ էֆ.ի թէ ի՞նչ կը պատասխանէ այս առարկութիւններուն։ Յիշեալը յայտարարեց որ սխալ են Բէյմալ էֆ.ի ըսածները, ընդհակառակն անանկին վերաբերեալ բոլոր գործերը օրինաւորութեան ստհմանին մէջ տեսնուած ու աւարտած են։ Անհիմն է նաև դործին մէջ 330 ոսկի դրամագլուխ ունեցող Ն. Մաեօխայի մասին ըսածները։ Այս անձը իր բաժինը փոխանցած է Մ. Իսաք Պարուխի, և ասիկա է հիմա գործին ընկերը։ Սակայն fօնանսիդեր ընկեր է, ու այս պատճառաւ բնականաբար պատասխանատու չէ։ Բէյմալ էֆ. ըսաւ որ այս պարագան պէտք է հաստատեն անանկները, այն ատենի իրենց հրատարակած չըրջաբերականը ցոյց տալով։

Նախագահը կարծիքը ուզեց ընդհ. դատախազին որ անանկին թուղթերուն ընդհ. դատախազութեան կողմէ քննութեան հարկ տեսաւ։

Դատարանը խորհրդակցեցաւ և համաձայնութեամբ ընդհ. դատախազին, ըստ այնմ վճիռ տուաւ։

Ծովային Առեւտր. Դատարան

Կարգացուեցաւ վաստարան Մուսթաֆա էֆ.ի տղերտագիրը, որով Իսմայիլ Հագգը էֆ.է ունեցած իր հրամանի 45 ոսկինոց մուրհակով պահանջին դանձուիլը, իսկ հակառակ պարագային չէչեալին անանկացուիլը կը խնդրէր։

Նախագահը հարցուց Իսմայիլ Հագգը էֆ.ի թէ ի՞նչ պիտի պատասխանէ։ Յիշեալին փոխանորդը յայտարարեց թէ

մուրհակին ներքեւի կնիքը հին դրած է, առանց տեղեկութեան իր փոխանորդեալին, որ չատ անգամ բացակայ կը գտնուի վաճառատուներէն, և պաշտօնեայ մը առանց իր պետին իմացնելու գործածած է կնիքը, որ վաճառատան մէջ կը գտնուէր: Այդ մուրհակը կեղծ է, Իսմայիլ Հապգը էֆենտի ոչինչ չէ ստացած անոր փոխարէն: Մուսթաֆա էֆ. ըսաւ որ անհիմն են այդ առարկութիւնները, մուրհակին ներքեւ կնիքը դրուած է դատախազեալին գիտութեամբ, և մանաւանդ մուրհակին պարունակութիւնը իր իսկ ձեռքովը գրած է: Դատախազեալը թէեւ պնդեց որ իրենք պարտք չունին, ոչ ալ տեղեկութիւն ունին այդ մուրհակին գոյութենէն ու այս պատճառաւ ազերապգրին մերժուիլը խնդրեց, սակայն դատարանը խորհրդակցելէ յետոյ ըստ օրինի հարցուց Մուսթաֆա էֆ.ի թէ պիտի կրնայ հաստատել որ մուրհակին կնիքը Իսմայիլ Հապգը էֆ.ի գիտակցութեամբ տրուած է: Մուսթաֆա էֆ. պատասխանեց որ քանի մը վկաներ ունի և կրնայ անմիջապէս ապացուցանել: Այս վկաները լսելու և ըստ այնմ վճիռ մը տալու համար դատավարութիւնը ուրիշ օրուան յետաձգուեցաւ:

Առեւտրական Քրոնիկ

×

ՈՐՍԻ ՄՈՐԹԵՐՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԸ

ԳԻՆԵՐԸ ԻՋԱԾ ԵՆ

Անցեալ տարուան բարձր վաճառումներուն նայելով, այս տարի որսի մորթերուն գինը աւելի բարձր կը յուսացուէր և այս յոյսով Անատօլուի մէջ մորթ հաւաքողները Պոլսոյ հրապարակին վաճառման գիներէն աւելի բարձր գնով ապրանք հաւաքել սկսան: Սակայն Եւրոպայի հրապարակներուն մէջ անցեալ տարիէն մնացած ըլլալուն և Սամոյրին գիներուն լինկած ըլլալուն պատճառաւ, մեր որսի մորթերն ալ 10% անկումի կրեցին, մանաւանդ սանսարի և ազուէսի մորթերը: Այժմ հրապարակին վրայ բաւական

թուով գնորդներ կան, և վաճառումները աւելի սանսարի մօրթի վրայ են։

Սահար. — *Էրզրումի, Վանի, Շ. Գարահիսարի և Սվազի տեսակները* 260/265, *կեսարիոյ և չրջակայքինները* 245/250, *Սեւ ծովու լաւ ապրանքները* 250/260, *Մարաշի, Աւանայի տեսակները* 235/240, *Սուրիական տեսակները* 210/225 *ղրշ.։*

Աղուես. — *վաճառումները աննշան են։ Գնորդները եւրոպացին գալիք գիներուն կ'սպասեն։ Աղուէսի մօրթի գործածութիւնը այս տարի ևս նորաձեւութենէ դադրած չըլլալուն, գիներու վրայ զգալի անկում չի յուսացուիր։ Շ. Գարահիսարի, Սվազի և Վանի տեսակները կ'արժեն* 70/75, *Սեւ ծովու տեսակները* 65/70, *Գոնիայի, կեսարիոյ տեսակները* 55/60, *Մարաշի, Այնթապի տեսակները* 40/50, *Սուրիական տեսակները* 25/30 *ղրշ.։*

Ջերսկա. — *Միայն Սեւ ծովու եղերքներէն կը ղրկուի և կ'արժէ* 350/365։

Բուհնուզ. — 220/235, *ըստ տեսակին։*

Բորսուկ. — *խնդրանք կայ,* 33/35*ի կը ծախուի* 10% *զեղչով։*

Վայրի կատու. — *Լաւ տեսակները մինչեւ* 18/20, *միւս տեսակները* 15/17, *զեղչ* 10%։

Նապաստակ. — *Վաճառում չկայ։ Հրապարակը թոյլ է։ Անցեալ տարի Ամերիկայի համար գնորդներ ըլլալուն՝ նըպաստաւոր գիներով ծախուեցան։ Այս տարի դեռ Ամերիկացի գնորդներ չերեւցան։ Մարսէյլի գիները տակաւ են։ Այժմու գինն է* 250 *ղրշ. և զեղչը* 5%։

Գայլի մորթ. — 40/50, *ըստ տեսակին։*

Արտածութիւն

Թիֆթիկ. — *Այս շաբթու ծախուեցաւ* 2733 *հակ, զոր գնեցին Տեսրք*

Աւսեն եւ ընկ. 59 *հակ Տէրի, Թօսիա* 15·20—18.

Յօֆա եւ ընկ. 465 *հակ Սիվրի հիսար Ան.* 18.30—19.20

Գասապեան Եպր. 962 *հակ Եօզղատ, Էնկիւրի* 18—18.20-19

Բ. Մահճուպեան 102 *հակ Կէրէտէ* 18.25

Ուիթլի եւ ընկ. 1145 հակ Սիվըրհիսար, Մուտուբլու 19. 20

Աֆիոն. — Ծախուեցաւ միայն 42 կողով, զոր գնեց Մը. Ուլթօլ 134/42էն, Պօլուի, Քէօթահեայի, Նալըխանի, Միխալըճի, Եսկիշէհիրի ապրանք:

Գարի. — Ծախուեցաւ 250 թօնօ: Անատօլուի էքսթրաչին օխան կ'արժէ 29½—30, Ս. տեսակը 28½ և Բ. տեսակը 27½ փարա:

Վարսակ. — 100 թօնօ: Պարթընի տեսակին օխան 23½ և Մարմարայինը 27 փարա է:

Եգիպտացորեն. — 400 թօնօ, Մարմարայի տեսակը, արտածութեան համար, կ'արժէ 25½ փր. օխան, Պանտրմայինն ալ նոյն գինն է, իսկ Րումէլիի տեսակը 25 փարա:

Թոչնակեր. — 500 պարկ: Ռոտոսթոյի տեսակը կ'արժէ 52 և Րումէլիինը 43 փարա:

Շուշմայ. — 450 պարկ: Մերսինի տեսակը, Պոլսոյ հրապարակին համար, կ'արժէ 105 փարա և արտածութեան համար 100 փարա:

Լուբիա. — 250 պարկ: Սեւ ծովի տեսակին 100 օխան 135—150, երկրորդը՝ 95—100 և Սելանիկի տեսակինը 205—210 ղրուշ:

Սիսեռ. — 300 պարկ: Անատօլուի տեսակը կ'արժէ 45—50 փարա, Պալըքէսիրի Ա. տեսակը 62—65, Բ. տեսակը 52—55 փարա:

Բիբրէ. — Ծախուեցաւ 26 պարկ հերմակ, օխան 19½ ղրուշէն:

Սալեպ. — 15 պարկ սովորական, օխան 14¾ ղրուշէն: Թօքաթի էքսթրան կ'արժէ 17—18 և Ամասիայինը 15½—16 ղրուշ:

Ձեհիր. — Գինիները լինկած են: Կեռասիայ տեսակին օխան կ'արժէ 8½—8¾, Էնկիւրիինը 8 և Զիլէինը 7¾ ղրուշ:

Մորթ. — Հրապարակը հաստատ է:

Կովու չոր մորթը	կ'արժէ	9	— 9½	ղշ. օխան
Օտեապալ կովու չոր մորթը	»	13	—14	» »
Սովսկան ոչխարի ազած չոր մորթը	»	8½	— 9	» »
Բնիկ ոչխարի թարմ մորթ	»	28	—30	» զոյգը
Գառնուկի մորթ	»	25	—26	» »
Այծի չոր մորթ	»	32	—34	» »

Եւրոպական Հրապարակներ

ԲԱՄԲԱԿԻ, ԲՈՒՐԴԻ, ԳԱՂԹԱԲԵՐԴԻ

×

Բամբակ

ԼԻՎՐՈՒԼ

	փետր. բշ.	փետր. գշ.	փետր. դշ.	փետր. եշ.
Յունիս—Յուլիս	5.60	5.60	5.60	5.66
Օգոստոս—Սեպտեմբեր	5.48	5.38	5.38	5.55
Պատրաստ ապրանք	—	—	—	
ՆԻՒ ԵՕՐՔ				
Յուլիս	—	—	—	
Հոկտեմբեր	—	—	—	
ՀԱՎՐ—ԲԱՐԻՁ				
Մայիսին յանձնելի ֆր.	68⅝	68⅞	69	69.5

Բուրդ

ՀԱՎՐ—ԲԱՐԻՁ				
Մայիսին յնձնել. ֆր.	187½	188	188½	190

Գաղթաբերք

ՀԱՎՐ—ԲԱՐԻՁ				
Խահուէ, Մայիսին յնձնել. ֆր.	39¼	40	39½	40
Շաքար, Մարտ/Ապրիլ ֆր.	26.31	26.06	26.06	26.06
Շաքար, Յուլիս/Օգոստ. ֆր.	26.18	26.93	26.93	26.93
Համպուրկ				
Խահուէ, Յուլիսին	32¼	33¼	32¾	33½
Շաքար, Մայիսին	18.40	18.30	18.30	18

Մետաղի Հրապարակը

Երկաթի, պողպատի, թիթեղի, պղինձի և գինկոյի վրայ կարեւոր գործառնութիւն մը չեղաւ։ Միայն 20 տակառ առնած ծախուեցաւ։ Ամսուսիկ մետաղի գիները, լ. Օսմ. 100էն.

Երկաթ ձող, պելժիական	կէնդինարը	դշ.	50
» չուետական	»	»	76—87
» » գամի համար	»	»	65—77

Բուդրեկ	»	» 41—42
Երկաթ ղրկանակ	»	» 52—53
» սահ 1/4	»	» 60
» » 5/10	»	» 66
» » 11/14	»	» 72
» » (Ժիրաէրս)	»	» 55
Գամ պէլժիական 15, 15/21, 48, 25 քիլօնոց տակառը		» 33½
Պաղպաղ Comte Turn, 50 քլնց. տնտուկը		» 92
Անագ	կենդինալը	» 1380
Թիթեղ, երկու տնտուկը		» 190
կապար խողովակ	օխան	» 3½
Պղինձ	»	» 18½
Զինկօ	»	» 5

Լոնտոնի մէջ անագի գինն է, ճոյլ, 191 և ճող 195 ոսկերկին։ Պղինձին գինն է 108—109 ոսկերկին, իսկ զինկօյին գինն է 26. 2. 6—26. 7. 6 ոսկերկին։

Մետաղի գիները

Լոնտոն թօնս	անգլ. ոսկի
Պղինձ կանխիկ	107⅞
Պղինձ երեք ամիսէն	108⅞
Կապար	19¾
Անագ	191⅞

Բարիզ 100 քիլօն	ֆրանք
Պղինձ	258
Անագ	526
Զինկօ	75
Կապար	56,75

Առեւտուրի կեանքը

ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

×

Վաճառականութիւն եւ ճարտարուեստ

ԽԱՐԲԵՐԴԻ ՄԷՋ

Խարբերդի առաջնակարգ վաճառականներեն Յարութիւն էֆ. Թիւֆենկճեան կը գրէ մեզ. —

Խարբերդ հին և վաճառաշահ քաղաք մ'է, 20,000 բնակչով և շրջակայ քաղաքներուն կը հայթայթէ զանազան ապրանքներ։

Քաղաքիս առջեւ կը պարզուի Մամուրէթ իւլ Ազիզ և բազմաչատ գիւղերով դաշտը, խնամով մշակուած, որ պատկերն է երկրին աշխատասիրական վիճակին։

Գլխաւոր բերքերէն մին է բամբակը, որ 70—80,000 լիտր կ'արտադրուի տարւոյն համեմատ։ Մէկ մասը միայն տեղւոյս մէջ կ'սպառի և մնացածը կ'արտածուի շրջակայ գաւառները, ինչպէս Տիարպէքիր, Էրզրում, Սվազ, Ամասիա եայլն։ Ներկայ գինն է 34—37, ըստ տեսակին։

Խոզակ. — Կլիմային ընձեռած առաւելութիւնները թըթենիներ հասցնելու և առողջ հունտ պատրաստելու աստար ըլլալով, վերջին տարիներս մանաւանդ բերքի անհամեմատ բարձրացում մը ցոյց տուաւ և այս տարի 80,000 քիլօ արտադրեց, չնարհիւ կայս. Բարեխնամ կառավարութեան ջանքերուն։ Հողատէրն ու երկրագործը ամէն ճիգ ի գործ կը դնեն այժմէն թթենիներ հասցնելու և կը կարծուի որ մօտաւոր տարեշրջաններու մէջ Խարբերդ մեծ շահաստան մը դառնայ։ Բերքի սեռն, այսինքն Յունիսի մէջ 15—17 դրչ. ծախուեցաւ օխան։

Մորթ. — Ուլ, այծ և ոչխար 8—10000 ոսկւոյ արտադրութիւն մը ունի և կը ղրկուի Այնթապ, Սամսոն և մաս մ'ալ կիրասոնի ճամբով Եւրոպա։

Նուշ. — Կ'արտադրէ ըստ տարւոյն 5—10000 լիտր և կը ղրկուի շրջակաները։ Երբեմն ալ կիրասոնի ճամբով Եւրոպա։ Գինն է 67—70 դրչ.։

Բիբրե, մազը. — Փոքր քանակներով միայն շրջականեբէ կը ներմուծուի և մեր հրապարակին վրայ վաճառուելով, Այնթապ, Հալէպ կը ղրկուի։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԵՍՏ

Կեսար. — Տեղւոյս մէջ մանուած և Եւրոպական 8—10—16թիւ մանածով խառն ճերմակ կտաւներ կը պատրաստուին քաղաքիս արուարձաններէն Հիւսէյնիկի մէջ, գլխաւորաբար կիներու ձեռամբ և տեղս գտնուած կարգ մը

արհեստաւորներէ կը ներկուի ալիզարինով և 7—8000 ոսկւոյ ապրանաց արժէքով կ'սպառի տեղս և չատ մը գաւառներ։

Որսի մորթ. — Սամսար, տիլքի, գունտուղ, ևն. կ'արտադրուի 3—4000 ոսկւոյ արժէքով։ Սամսարի նեգրկայ գինն է 120, տիլքինը 30—32։

Գորգ եւ թիրէ. — Տեղս ամերիկեան վարժարանի ճիւղը գորգի գործարան մը ունի և ջանադիր է զարգացնելու։

Նշանակելի են նաեւ Բիւրքճի օղու և Ֆապրիկաթուռեան եղարց երկու գործարանները, որք կ'արտադրեն ընտիր մետաքսէ ապրանքներ։

ՆԵՐԱԾՈՒՄ

Մանիֆաթուրա. — Մէջին հաշուով 45—50000 ոսկւոյ ապրանք կ'սպառի, որուն 25—30000ը կ. Պոլսէն կը հայթայթուի և մնացածը Հալէպէն։

Ծանօթ. — Տեղւոյս առևտուրը խանութպաններու հետ կ'ըլլայ սակացոյցի վրայ, կ. Պոլսոյ ապրանաց գիներուն վրայ $^0/_0$ին 8/10 մասնաւոր չահ մը բարձելով. վերան աւելի ու պակաս տուած ըլլալը խանութպանը չի փնտռեր և ո'չ ալ վաճառականին տուած վարձն ու ըրած ծախսը։ Հալէպի մէջ Օսմ. Լիրան 127 ղրշ. է, իսկ հոս 108 ղրշ.։ Ապրանքը սակացոյցի վրայ կը ծախուի և երբեմն մասնակի զեղչեր կ'ընէ։ Վճարումները կանոնաւոր չեն։ Ո'չ գնող տեղացի խանութպանը գիտէ թէ ե'րբ պիտի վճարէ և ո'չ վաճառողը։ Վճարումները չարթէ չարաթ կ'ըլլան մասնակի կերպով։ Շրջակայ գաւառներէ եկող վաճառականաց համար պայմանաժամ մը կ'որոշուի ընդհանրապէս և մնբհակ մ'ալ կ'առնուի։

Թիրէ, Տեղական ապահա. — 13,000 ոսկւոյ չափ կ'ըսպառի, 7000 Ա. յնթիապի ապրանք, 5—6,000 մ'ալ Ապրաքկիրի։

Շամար. — Հազիւ 1500—2000 պարկ կ'սպառի։ Կը հայթայթուի Սամսունէ և Սվազէ։

Խանուկ. — 100—150 պարկ հազիւ կ'սպառի։

Երկաթ, Պողպատ, Անագ, Պղինձ. — Մէջին հաշուով 5000 ոսկւոյ սպառում ունի։

Ադդարիճ. — Այս ապրանքէն 10—12,000 ոսկիի կը ծախուի ամէն տեսակովը։

Ալիզարին. — 75—80 տակառ կ'ծախուի 20 և 40 թիւ։

Բարիւղ. — 4—5,000 մնոռուկ քարիւղ կ'ծախուի գլխաւորաբար Սվազ և Սամսոն ներածուելով։

Օճառ. — Միջին հաշուով 30 խազան կ'ծախուի, խազանը 3600 օխա է։ Կը հայթայթուի գլխաւորաբար Հալէպէ և Այնթապէ։ Այնթապի օճառը 21.5 օխան մէկ լիրա և Հալէպինը 19.5 օխան մէկ լիրա կը վաճառուի։

Գոմեշի կաշի. — Կը ներածուի գլխաւորաբար Հալէպէն և փոքր մաս մը ուղղակի Հնդկաստանէն։ Կ'ծախուի միջին հաշուով 4000 հատ և 10000 ոսկիի, որու մեծ մասը տեղս խաղախորդներու ձեռամբ կը պատրաստուի և մաս մ'ալ խամ կը վաճառուի Զնքուչի համար։

ՍԵՂԱՆԱԽՈՐԱԿԱՆ. — Տեղս ո՛չ պանքայ կայ և ո՛չ անհատական սեղանաւորական հաստատութիւն, որով ընդհանուր առեւտրականներ ստիպուած են իրենք կատարել իրենց դրամական գործերը։ Քանի մը լումայափոխ սեղանաւորներէ կատ երկու գլխաւոր փոխանակագրի գործ ընողներ կան, Յարութիւն էֆ. Խարբութլեան և եղբայրք՝ և Յակոբ էֆ. Ճանճիկեան։

1906ի ԻՄԱԿԷՆՏԷՐՈՒՆԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1906 տարւոյ մէջ, Իակէնտէրունի նաւահանգիստը ներածուած է 32,465 թոնս վաճառք, 2,735,000 Օսմ. ոսկի արժողութեամբ և արտածուած է 50,200 թոնս, 1,690,000 ոսկի արժէքով։ Բացի Թուրքիոյ զանազան նաւահանգիստներէն, օտար երկիրներէ ներածուած են հետեւեալ տեսակով ու քանակով վաճառքներ։

Անգլիայէ 10,411 թոնս մանիֆաթուրա, քանաւաչօ, պարկ, մոլթ, կաշի, կապար, ղինկօ, երկաթ, երկաթեղէն իրեր, հանքածուխ, բրինձ և դեղի նիւթեր 1,450,000 ոսկի արժէքով։

Աւստրիայէ 6277 թոնս չաքար, սուրճ, թուղթ, երկաթ, քարիւղ 247,000 ոսկի արժէքով։

Իտալիայէ 1206 թօնս խուրտավաթ, մանիֆաթուրա, թուղթ 175,000 ոսկի արժէքով։

Ֆրանսայէ 900 թօնս մորթ, կաշի, դեղ, ոգելից ըմպելի, խուրտավաթ 165,000 ոսկի արժէքով։

Գերմանիայէ 1130 թօնս մանիֆաթուրա, երկաթ, ապակի, ներկ 95,000 ոսկի արժէքով։

Պելժիա 1351 թօնս երկաթ, կապար, բիւրեղեայ վաճառքներ, դեղեր 65,000 ոսկի արժէքով։

Ռուսիա 3825 թօնս շաքար, քարիւղ 40,000 ոսկի արժէքով։

Ամերիկա 1200 թօնս երկաթ, քարիւղ 15,000 ոսկի արժէքով։

Իակէնտէրունէ Թուրքիոյ գանագան նաւահանգիստները արտածուած են 8000 թօնս մանիֆաթուրա (տեղական արտադրութիւն) բուրդ, չուչմայ, արմաւիք, օճառ, պիտակ և կարագ 525,000 ոսկի արժէքով։

Իսկ օտար երկիրներ արտածուած են հետեւեալ տեսակով ու քանակով վաճառքները։

Ֆրանսա 5400 թօնս խոզակ, բուրդ, արմաւիք, հաւկիթի ճերմակ և դեղին, պիտակ, մորթ և սախթիյան 235,000 ոսկի արժէքով։

Ամերիկա 15630 թօնս բուրդ, մխյանքէօքիւ, պիտակ 200,000 ոսկի արժէքով։

Անգլիա 7030 թօնս արմաւիք, պղինձի հանածոյ, գխտար և հաւկիթի դեղին 135,000 ոսկի արժէքով։

Իտալիա 2015 թօնս բուրդ, մեղրամոմ, արմաւիք 52,000 ոսկի արժէքով։

Գերմանիա 865 թօնս սախթիյան, մորթ, մեղրամոմ և ճհնրի։

Աւստրիա 450 թօնս չուչմայ, խաչիաչի հունտ և ազած փորտիք։

ՊԱՆՏՄԱ

Մեսաքսի և խոզակի վրայ ոգեւորեալ գործեր կան։ Արմաւիքի պարծանութիւնները թոյլ են։ Ջմրան պատճառու ներքին գաւառներէն ապրանքներու ժամանումը դժուարացած է։

ԷՆԿԻՐԻ

Արմոիքի վրայ, որ երկրին արտադուքեան հիմը կը կազմէ, բաւական կարեւոր գործեր կ'ըլլան։ Գարեջուրի պատրաստութեան յատուկ գարին ապահովու վրայ է։ Գալով ցորենին, չահագէտները կը մթերեն զայն, որովհետեւ արտադիչներուն գործին չի գար այժմու գինը։

ԻՍԿԻՇԷՀԻՐ

Գարիին խնդրանքը շատ է, բայց գործատնութիւնք տահմանափակ են ապրանք չըլլալուն համար։ Ցորենի հրապարակը փոփոխում չկրեց և սթօքը երթալով կը չատնայ, որովհետեւ առաջարկուած գիները, քիլէին 16—19 դրշ., գոհացուցիչ չեն։ Մեռաքի և խոզակի հրապարակը խիստ հաստատուն է և գիները կը բարձրանան։ Հակառակ նախանիւթի պակասութեան, կը յուսացուի որ էարնէէն Պիլէճիկ ներածուած խոզակները պիտի կրնան մինչեւ փետր. վերջ գործ հայթայթել մանարաններուն։ Այս ներածումներուն քանակն է 100,000 քիլօ չոր խոզակ, 47,000 Օամ. ոսկի արժէքով։

ԱՖԻՕՆ ԳՈՐԱՀԻՍԱՐ

Առեւտր. գործատնութիւնները տահմանափակ են։ Արմտիքին գիները լինկած ըլլալով, ապրանք ունեցողները ոչ ըոշած են իրենց սթօքը պահել, յուսալով որ գիները կը բարձրանան։ Աֆիօնին գինը բարձրացաւ բոլորովին անակնկալ համեմատութիւններով, բայց գլխէթէ ապրանք մատցած չէ, որով Գարահիսարի վաճառականները չատ չօգտուեցան այն նպաստաւոր պարագայէն։

ԻԶՄԻՐ

Ողեւորեալ գործատնութիւններ՝ ամէն տեսակ վաճառքներու և մանաւանդ չոր պտուղի վրայ։ Աֆիօնը նախորդ ամիսէն քիչ ծախուեցաւ, որովհետեւ ապրանք ունեցողները բարձր գին կը պահանջեն։ Խոզկապկին հրապարակը տկար է, իսկ գարիի համար կարեւոր վաճառումներ եղան։

ԱՅՏՐՑ

Գործ չատ կայ հրապարակին վրայ։ Արմտիքն ազէկ գիներով կը ծախուի։ Բամբակի և իւղի արտադումն սկսաւ և

Իզմիրի հրապարակէն այս երկու տեսակ ապրանքներուն համար վճարուած պինները գոհացուցիչ են։ Թուզի եղանակն աւարտեցաւ և արտածումն հասաւ 115,000 բեռի։ Մինչեւ պինն է, 44 օխանոց կենդինարը, 85 ղրշ. ոսկեդրամ, ինչ որ գոհացուցիչ չահ մը թողուց երկրագործներուն։ Իսկ մեծ կարեւոր ունեցան Իզմիրի արտածող վաճառականները, որոնք ալիվուռ վաճառումներ ըրած էին Անգլիոյ և Ամերիկայի գնորդներուն։

ՆՈՒԷՐ. — Ծանօթ վաճառական կարապետ էֆ. Ճաճուզեան տարեկան մը Բիւրակն նուիրեց կեսարիոյ Ս. Կարապետ վանքի վարժարանին։

Դրամզիդի Վաճառականութիւնը

Տրապիզոնի և Էրզրումի ճամբով պարսկական դրանզիդի վաճառականութեան վիճակը Փետր. 2էն 7. —

Պատրաստ	հակ	2544
Մանիֆաթուրա	»	157
Զանազան վաճառք	»	211
		2912
Էրզրումի ճամբով առաքում		—
Ուղղակի առաքում		657
	Պատրաստ հակ	2255

Խոխաղրութեանց գիներ. —

210 ղրան կենդինարը (230 քիլօ) հակերու համար
260 » » » » անտուկներու համար

Փոխանակութեանց գիներ. —

Լոնտոն 3 ամիս սգերլին,		ոսկեդրամ	107
Բարիզ »	Օսմ. ոսկի	ֆր.	22·93
Վիեննա 31 օր քուրօն		ղրուշ	4·21
Րուպլ,	Օսմ. ոսկի	րուպլ	8·71

ԱՅՑԵԼՈՒ ԳՐԱԳԻՐ. — Տահկերէն, Հայերէն, Ֆրանս., Անգլ. և Գերմ. լեզուներու հմուտ և փութաջան տոմսարակալ մը կը փոխադրի վաճառատունը մէջ այցելու տոմսարակալի և թղթակցի պաշտօն ստանձնել։ — Կը խնդրուի դիմել Պահեստ թաղ, Մէտաժըրի ընկ. դրասենեակին վրայ թիւ 12։

Պոլսոյ Նաւահանգիստը

25 Փետրվ.է մինչեւ Մարտ 13 (Հ. Ե.) հասած են կամ կ'սպասուին հետեւեալ առեւտր. չոգենաւները։

ՄԷՍԱԺԸՐԻ ՄԱՐԻԹԻՄԻ Սիտնի 25 Փետ., Պոսֆոր 3 Մարտ., Բաֆէլի Սիւէսէն 5 Մարտ, ՏՕՅՉԷ ԼԷՎԱՆԹԻ Իմպրոս 2 Մարտ, Նաֆսոս 3, Վ.օլոս 14, Լէսպոս 15։ ԱՒՍՏՐ. ԼՕՅԴԻ Զալցպուրկ 25 Փետ., Մէտիա 28։ ՖԼՕՌ-Ո ՌՈՒՊԱԹԻՆՈՑԻ Պոռվիս-ս 27 Փետ., ՖՕՍՓՕՐՕ ՄԱՆԿՈՑԻ Ադլաս 13 Մարտ։

Տոկոսի Օրինական սակը

Առենէ մ'ի վեր պահանջեալ պաշտօնատանց միջեւ բանակցութիւնք կը կատարուէին 6% օրինական տոկոսը 7ի զեղչելու համար։ Պետական Խորհուրդը քննելով այդ խնդիրը, օգտակար դատած է օրինական այդ զեղչը, և ըստ այնմ գործադրութիւն կատարել որոշած է։

Փոխանակագրի Գիները

	Վաճառում	Գնում
Լոնտոն	110 27/10	110. 7
Բարիզ	22 82½	22. 92½
Վիեննա	18 52	18. 62
Պերլին	21 80	21. 90

Շահար եւ Խաւուէ

Շահար. — Եւրոպայի հրապարակներուն վրայ չաքարին գինը նշանակելի փոփոխութիւն չկրեց։ Այս տարուան մթերքը անցեալ տարուընէ նուազ է, իսկ 1905էն մէկ միլիոն թօնօ աւելի։ Ֆրանսայի մէջ չաքարին գինը քիչ մը կուրեց, ու այս պատճառաւ Անգլիա աւելի մեծաքանակ չաքար ներածեց և Բարիզի չաքարի սթօքէն 5—6000 թօնօ պակսեցաւ։ Ամերիկա իր պէտքերը Ռուսիայէ կը գնէ, և մինչեւ անցեալ շաբթու 65,000 թօնօ չաքար ժամանած էին ամերիկեան նաւահանգիստները։

Անցեալ երկու շաբաթուան մէջ Պոլսոյ հրապարակը ժամանեց 98 վակօն չաքար Թրիէսդէէ և 20 վակօն չաքար

Ռումանիայէ, և ծախուեցաւ հետեւեալ գիներով։ (Մէկ վագօնը կը պարունակէ 120 պարկ մէլիս և 100 պարկ կրանիւէ, գիները են Օամ. ոսկին հարիւրէն, կինդինալը 44 օխա հաշուելով։)

Մէլիս դրանդիդ	82—83½
» տեղական	85.
Կրանիւէ դրանդիդ	80—81
» տեղական	82

Խահուէ. — Եւրոպական հրապարակներու վրայ ինչպէս նաեւ արտադրավայրերու մէջ խահուէի գիները բարձրացընելու համար տանիլ մ'ի վեր խորհուած միջոցները տակաւին նպաստաւոր արդիւնք մը չտուին, գիները գրէթէ անփոփոխ են։ Կը հաշուուի թէ համազգային հրապարակներու վրայ իրը մէկուկէս միլիոն պարկ սպօզ կայ, այսինքն տարեկան բոլոր ստացած քանակին չափ։

Պոլսոյ հրապարակին վրայ գիները են 100 օխան ոսկեդրամ.

Բլօ	լուացուած	700
»	Ա. տեսակ	630
»	Բ. »	600
»	Գ. »	500
»	Դ. »	560
Սանդոս, վաճառքին համեմատ		680

Սպրոյ. — Նախընթաց չաբթու ալքոլին գիները կտարեցին քիչ դրծ ըլլալուն պատճառաւ։ Այս չաբթու քիչ ապրանք ժամանեց և գիները ամուր էին։

Երկու չաբաթուան մէջ Պոլսոյ հրապարակը ժամանեցին ընդամէնը 191 տակառ ալքոլ, 80 տակառ Ուլտաոֆնքայի, 30 տակառ Անտրասոֆքայի, 25 տակառ Դիօթքինոյի, 25 տակառ Վրանխքիի արտադրութիւն, և ծախուեցան Չէրվոնա և Անտրասոֆնքան 37—38 օխան, Դիօթքինօ 36½—37 օխա, Վրանխքի 36—40 օխա, Ուլտաոֆնքա 36—37 օխա։

Գետնախնձոր. — 3410 պարկ գետնախնձոր Պոլսոյ հրապարակը ժամանեցին անցեալ երկու չաբաթուան մէջ։ 1435 պարկ Ատարազարէ, 1250 պարկ Նաբուլիէ և 725 պարկ Մարսիլիայէ ներածուեցան և ծախուեցան հետեւեալ գիներով, առաջինն տեսակը՝ վաճառքին համեմատ պարկը 27—47 ղրշ.ի, երկրորդ տեսակը 48—50 ղրշ.ի և երրորդ տեսակը 54—55 ղրշ.ի։

Ամենապատիւ Տ. Տ. Մաղաքիա Ս. Պատրիարք Հօր ծրագրեաց 66րդ տարեդարձին առթիւ, Բիւրակնի խմբագրութիւնս ալ ի սրտէ կը ձայնակցի իր պատշաճակիցներուն բարեմաղթութեանց եւ իր յարգալիր խնդակցութիւնները կը մատուցանէ Ն. Բարձր Սրբազնութեան։

×

ՄԱՆԱՄԻ ՕՐՈՒԱՆ ԳԻՆԵՐԸ

16 *Փետրուար* 1907

Վաթէր եէմի գուլէ Նօ. 4	31%	*կանխիկ հաս*
Էքսդրա եէմի գուլէ Նօ. 4	35%	»
Վաթէր Հնդկական Նօ. 4/8	31/32%	»
Վաթէր անգլ. և իտալ. Ս. Նօ. 20	50%	61 *օրավ*
Վաթէր իտալ. Բ. Նօ. 20	43/5%	»
Վաթէր իտալ. Ս. Նօ. 6/14	36/7%	»
	Օամ. ոսկին 106*էն*	
Էքսդրա անգլ. Ս. Նօ. 18/24	62	»
Էքսդրա անգլ. Ս. Նօ. 12/14	56	»
Էքսդրա իտալ. Ս. Նօ. 18/24	56	»
Էքսդրա իտալ. Բ. Նօ. 18/20	48	»
Էքսդրա իտալ. Բ. Նօ. 12/14	46	»

Գործերը կայուն են, թէեւ քիչ օրէն բացուելու մեծ յոյս կայ, այն ատեն ի հարկէ գիները աւելի պիտի բարձրանան։

Իզմիրի Հրապարակը

Փետրուար 10*ին հետեւեալ վաճառումները եղած են։—*

10,500 *պարկ ցորեն կենդինարը* 52—77 *ղրուշ մէճիտիկէ* 33*էն։ — Շրջականերէն եկած է* 10,700 *պարկ և պատրաստ կայ* 79,700։

3,000 *պարկ գարի* 14.25—14.50 *ղրուշէն քիլէն* (17 *օխա*) *մէճիտիկէ* 20.50*էն։ Պատրաստ կայ* 4,000 *պարկ։*

24,000 *կենդինար խոզկաղին, 40—80 ղրուշէն, Լ. Օամ. 125 ղրուշէն։*

800 *պարկ չամիչ։ Սեւերն գինն է Լ. Օամ. 125 ղրուշ, 60—65 ղրուշ կենդինարը։ Անկուտ չամիչին գինն է 4.75—6.75 ղրուշ։*

Արտօնատէր Հ. Ս. Խ. Իթթիհատեան — Տպագր. Նշան Կ. Պէրպէրեան

ՄՍՐԼԵԱՆ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ

Ահաւասիկ յայտագիրը ծանօթ ընթերակարդ և երգահան Մսրլեան էֆ. ի նուագահանդէսին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Փետր. 23ին, Իւնիօն Ֆրանսէզի սրահին մէջ, մասնակցութեամբ Օր. Օր. Ի. Դավանօզի և Ա. Սերոբեանի, ինչպէս նաեւ փոքրիկն Էտուարտ Մսրլեանի.—

Ա. ՄԱՍ

1. *ԱԼԱՌ*, Սեճճօճի fօճսեւդաճդ
   Ա. Մսրլեաճ էֆ. եւ Օր. Սերոբեաճ
2. *ՌԱՃԴ*, Գավադիճ, Ա. Մսրլեաճ էֆ.
3. *ՎԻՐՏԻ*, Դրավիադա, Օր. Ի. Դավաճօզ
4. *ՊԱՃԻՆԻ*, Ռօճis տէ Լիւդճ, Ա. Մսրեաճ էֆ.
5. *ՄՍՐԼԵԱՆ*, Ռօմաճս, Ա. Մոռլեաճ էֆ.

Բ. ՄԱՍ

6. *ՇՈՒՊԼՌ*, Սեւրճաս, Էտուարs Մսրլեաճ
7. *ՎԻՆՆԱՎՄՔԻ*, Բօյօճեզ տը fօճսեռ, Ա. Մսրլեաճ էֆ.
8. *ԱԼԱՊԻՀՃ*, Ռօսիճեօլ, Օր. Ի. Դավաճօզ
9. *ՄՍՐԼԵԱՆ*, Մօդիճ վաոիե, Ա. Մսրլեաճ էֆ. եւ Օր. Սերոբեաճ
10. *ՍՍՐԱՋԱԴ*, Ցիկայճեւ վայզիճ, Ա. Մսրլեաճ էֆ.

Դաշնակը պիտի վարէ Նչանեան մահպրօ մը։

Բասած եուսուֆ թիւ 6, Շիշէճիլէր փողոց

Իզմիր, 1/14 Փետրվար 1907

Տ.

Պատիւ ունինք Ձեզ ծանուցանել որ հրապարակիս վրայ

Վ. Ղ. ՊԱԼԱՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

անուամբ քօմանտիթ ընկերութիւն մը կազմած ենք որ սեղանաւորական գործառնութիւններով ու յանձնակատարութեամբ պիտի զբաղի,

Մեր Տիար Վ. Ղ. Պալապանեան միայն, իբր պատասխանատու տնօրէն ընկերութեան, ստորագրելու իրաւունք պիտի ունենայ։

Հաճեցէք ծանօթանալ իւր ստորագրութեան որ ի ստոյգ և ընդունիլ, Տ..., մեր խորին յարգանաց հաւաստիքը։

Վ. Ղ. ՊԱԼԱՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մեր Տիար Վ. Ղ. ՊԱԼԱՊԱՆԵԱՆ պիտի ստորագրէ

2=2

Վ. Ղ. Պալապանեան եւ Ընկ.

Անոնք որ կը փափաքին իրենց կամ իրենց սիրելեաց միոյն յիշատակը յաւերժացնել Թող հաճին կարդալ սոյն ազդը։ —

ԿԱՐԴԱՑԷՔ ԵՒ ՓՈԻԹԱՑԷՔ

ՕԳՏԱԻԷԼ ՍՈՒԹԷՆ

Միակ պայման։ —

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ, ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ

Նրբուշիւն, անմրցելի փիլ

Եւրոպական համբաւաւոր նկարչատան մը միջոցաւ, գեղարուեստին պահանջած կատարելագործութեամբ եւ նոյնհրնաք դրութեամբ, ամէն տեսակ լուսանկարներ կը վերծացուին բնականին չատ և նման, թէ՛ սեւ (գառա գնդակ) եւ թէ գունաւոր, որք մանուաւոր խնամքով պատրաստուելով, երբեք չեն տարբերիր։

Հետեւեալ ցուցակի համաձայն յանձնարարութիւններ կ'ընդունուին, բաւ է փոխարժէքով միասին, բոլորայով ղրրկել մեծցուելիք ո և է լուսանկար, որուն մեծցուած պատկերը անմիջապէս կը ղրկուի իր տիրոջ հասցէին, յանձնարարութեան թուականէն առնուազն ամիս մը վերջ։

Գունաւոր պատկերներու համար անհրաժեշտ է ճշտութեամբ նկարագրել դէմքի, աչքերու, մազի, հագուստի եւն. գոյները։

Աւելի մեծ կամ որոշեալ ծաւալով եւ կամ առանց որեւէ թուչի պատկերներու գիներու մասնաւոր ցուցակ մը՝ ինչպէս ամէն տեսակ մանրամասն տեղեկութիւններ, փափաքողաց ձրիապէս կը տրուին։

Ամէն տեղ գործակալ կը փնտռուի

Նպաստաւոր պայմաններ

Հասցէ՝

Թագուոր Պ. Քիւրքճեան

Ընդհանուր ներկայացուցիչ

Պրուսա, Սարաճլար փողոց թիւ 7

Մէկ գոյնով ակռաճնիսրման՝

24×30 *անդիմադր. մեծութեամբ* 25 *դրչ.* 45×30՝ 30 *դրչ.* 40×50՝ 40 *դրչ.* 45×60՝ 50 *դրչ.*՝ 60×80՝ 75 *դրչ.։*

Մէկէ աւելի բնական գոյներով ակռաճնիսրման՝

24×30 *անդիմադր մեծութեամբ* 40 *դրչ.* 45×30՝ 60 *դր.* 40×50՝ 75 *դրչ.* 45×60՝ 85 *դրչ.* 60×80՝ 140 *դրչ.։*

25—9

ԻՒՆԻՕՆ

Ապահովագրական Ընկերութիւն

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1828

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1829

ՆՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

Դրամագլուխ եւ Պահեստ	296	*միլիոն ֆր.*
1905ին *գանձուած ապահովագին*	39	» »
Մինչեւ 1905ի վերջ հատուցուած վնասք	160	» »

Ինչպէս այս թիւերէն կ'երեւի, ընկերութեան դրամագլուխը ու պահեստի գումարն է **296** ՄԻԼԻՈՆ ՖՐ., *որ հսկայ երաշխաւորութիւն մը կ'ընծայէ ԻՒՆԻՕՆԻ ապահովագրելոց։*

Արեւելքի համար *մասնաւոր զեղչեալ սակագոյց։* Նպաստաւոր պայմաններ առնուամբաս կերպով աւելի ԳԵՐԱԶԱՆՑ ըլլալ ուրիշ ո՛եւ է ընկերութեան պայմաններէ։

Ընկերութեան գրասենեակն է ՕՄՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ Թուրքիոյ եւ Արեւելքի Ընդհ. Տնօրէնութիւն

Տնօրէն *ՍԻՄՕՆ ՔԱՅԱԼՔԼԵԱՆ*

Կեդրոն Ճիւղին պետ *ՄԻՀՐԱՆ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ*

ՍԹԱՄՊՈՒԼ, Մուխթան Համամ, Բանքոնը Օղլու թաղամ

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր հաղորդակից մէջ

50—10

Դարեհ Սահակեան

ՎՃԱՌԱԿԱՏՈՒՆ ԽԱՒԼՈՒՒ, ՄԵՏԱՔՍԵԳԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՅ

Պրուսա, Թիմուր Ֆաթու Զարդըի գլուխ, Թիւ 192

Վաճառում մեծ եւ փոքր քանակութեամբ. — Ամէրցկի գին — Ցանձնարարութիւնք կը կատարուին ճշտութեամբ եւ արագութեամբ

20—14

Լ'ՈՒՆԻՎԵՐՍՕ

L'UNIVERSO

Ապահովագրութեանց Վտանգներու դէմ

ԻՏԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կեդրոնատեղի ՄԻԼԱՆ

Դրամագլուխ **2,250,000** Լիրա

ընկերութիւնը թէ՛ ծովու և թէ ցամաքի վրայ ապրանքներու փոխադրութեանց համար ապահովագրութիւններ կ'ընդունի խիստ չհաւատր պայմաններով

Աւրագ եւ ամբողջական հաստուցում վնասներու

Ընդհ. Գործակալ եւ «Ավառի»ի խմբագիր

ԲԱՐՍԵՂ ԹԻՒԼԵԱՆ

Գօճաման Օղլու Խան, Կ. Պոլիս

Դեր-Գործակալներ՝ Թուրքիոյ գլխաւոր նաւահանգիստներու մէջ։

*** *Գոհացուցիչ պայմաններով դեր գործակալներ կը փնտռուին այն տեղերը ուր գործակալութիւն հաստատուած չէ տակաւին*

Տեղային գործակալները կը փնտռուին պատուաւոր ու կարող Շահաւոր պայմաններ 50—10

ԱՐՄԷՆ Խ· ԹԷՎՐԻԶԵԱՆ

Շերամաբաց — Հնտավաճառ

ԽԱՐԲԵՐԴ

Կ'ուզէ՞ք առողջ, կորովի, խիստ ընտիր ու միանգամայն դիւրամատչելի գիներով շերամի հունձ մը (Պաղատատի) ձեռք բերել, ուղղակի վերի հասցէին դիմեցէք, որ իրեն սկզբունք ընտրած է իր արդար չահը չաճախորդաց չահուն մէջ փընտրռել։ Բազում տարիներու գործառնութիւնները ասիկա կը հաստատեն արդէն։ Փորձեցէք ու դուք ալ պիտի համոզուիք։ Յաճախորդներէն փոխադրողաց չերամապահական հրահանգներ ալ կը տրուին ձրիապէս։ Կեղծերէն չխաբուելու համար էթիքէթին ու չղարչ տոպրակի կնքամոմին վրայ AHT *երեք միացեալ գրերու վաճառանիշը փնտռելու է։*

8—7

ԲՒՐԱԳՆ «پوراكن»

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Մէհմէտ փաշա խան, թիւ 12

ارمنيجه غزته‌سى

درسعادت محمد پاشا خان نومرو ۱۲

PURAGN

Revue Arménienne

Stamboul, Mehmed Pacha Han, N. 12

Կ. ՊՈԼՍՈՑ ՕՍՄ. ԱՌԹԻՏ. ՍԵՆԵԱԿԷՆ ՅԴՆԱՀԱՏՈՒԱԾ

Բ. ԵՐՔԱՆ

թիւ 17 — 18

ՊԱՅՄԱՆՆԵՐ

52	Թիւի բժնդգ. Պոլիս եւ Գաւառ	60	ղրշ.
»	» » Արտասահման	13	ֆր.
26	Թիւի համ. բժնդգ. կ'ընդունուի Թանուցուի համար զեղչեալ գին		

ՆՈՒԻՐՆԵՐ

52 Թիւի բաժնեգինը եւ 2 ղրշ.ի առաքման ծախքը կանխիկ վճարող ամէն բաժանորդ կ'ստանայ Հէրէքէի հռչակաւոր գործարանին մէջ պատրաստուած գոյգ մը ընտիր բուրդէ գուլպայ եւ մետաքսէ փողփողուն թաշկինակ մը, որոնք իրենց նրբին յօրինուածքովը տեղական ճարտարարուեստին յառաջդիմութիւնը կը հաստատեն

Մէկ բաժանորդ գտնողը կ'ստանայ

		էջ ոը Բառի մը	10	ղրշ.
երկու	»	» Առեւ.եւ Տնտ.Աշխ.	15	»
երեք	»	» Մէճէլլէ	30	»

24 ՓԵՏՐՈՒԱՐ 1907

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՃԱՌԼ ՄԱՌԻ ԺԱԳԱՐ

ՄԵՏԱՔՍԻ ԻՆՉՊԻՍ ԿՐ ՀԻՄՈՒՆ

×

Ժագառ, արկածախնդիր կեանք մը անցընելէ ետք Ֆրանսական գաւառներու մէջ, դարձաւ կնոջ մօտ, որ լաթ լուալով կը չահէր իր ապրուստը և իր քաշած տառապանքներուն չկրնալով տոկալ, քիչ առնէն մեռաւ, միշտ մեծ հաւատք ունենալով իր ամուսնոյն օգտակար գիւտին վրայ և մահուան անկողնին մէջ երդում առնելով անկէ որ չյուսահատի և չարաւնահէ իր փորձերը, գործատուր դառնա կարգին մեծ բարիք մը ընելու համար:

Ժագառ, իր ամուսնոյն մեռնելէն ետք, սուգի ու մենութեան մէջ երբեք չմոռցաւ իր գիւտը և ցերեկները պարզ գործաւորի մը պէս աշխատելով, գիշերը կ'ըղձար մեռոքս հիւսելու յատուկ իր մեքենային մանրամասնութիւններով: Վերջապէս 1800ին աւարտեց և անոր նմոյշը ընդունել տուաւ 1801ի ճարտարարուեստական Ցուցահանդէսին մէջ: Այս ցուցահանդէսին վարչութիւնը արդարև միտք մը տուաւ երեն «մեքենայի մը համար, որ առհղանկար հիւսուածոներու չինութեան գործին մէջ մեկ գործաւորի խնայութիւն մը առաջ կը բերէ»: Սակէ վերջն էր որ սկսան աւելի հետաքրքրուիլ այս աշխատասէր արհեստաւորին ջանքերով: Յաջանալի նըւանաւոր անձնաւորութիւն մը 1802ին Լիոնէ անցած ատեն այցելեց անոր համեստ աշխատանոցը և հրաւիրեց զինքը որ Ամբուատից Թանգարանին մէջ բնակի և աշկերտներ հաւորի: 1804ին էր միայն որ իր անունը վերջնապէս հաստատուեցաւ: Բարիզի Արհեստից Բծնաբերվատուտանին մէջ հաստատուելով, առիթ ունեցաւ տեսնելու Վօքանսոնի մեքենան, որ շատ տարիի մը մէջ երեսի վրայ ձգուած էր: Ժագառ այդ մեքենան ուշադրութեամբ քննելով, իր մեքենան կատարելագործեց և իր ձեռքով մեռոքսէ հիանալի չրջազգեստ մը չինեց երբեւ նուէր, և ստացաւ ոսկի միտալ մը:

[Կը շարունակուի]

THE SINGER

MANUFACTURING Cie.

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

400է աւելի Պատոյ վկայական Շեպորամ

Սինկէրի կարի մեքենաները, իրենց տոկունութեանը համար աչքառկի ամէն կողմը ատրածուած են։

ԲՈԼՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ
ԲՈԼՈՐ ԴԵՐՁԱԿՆԵՐ
ԲՈԼՈՐ ԿՈՇԿԱԿԱՐՆԵՐԸ
} Սինկէրի մեքենայ միայն կը գործածեն

Մասնաճիւղեր բովանդակ Թուրքիոյ մէջ

Սինկէրի մեքենաները կը ծախուին.—

ԲՈՒՐԱ. { Շիտակ ճամբայ, կայարատեղւոյն դիմաց
» » Պօնմարշէի դիմաց, 313կրկ.

ՂԱԼԱԹԻԱ. { Սինկէր խան, Թիւնէլին ետեւ
Թրամուէյի կայարանին դիմաց

ՊՈՒԼԻՍ { Սուլթան Համամ, Թիւ 2
Սուլթան Պայազիտ, Թրամուէյի կայարանին դիմաց, Թիւ 13

ՍԿՈՒՏԱՐԻ, Զարշը Պոյու, Թիւ 120

Սինկէրի կեդրոնատեղին կը գտնուի Բերա, Շիտակ ճամբայ Թիւ 343 կրկին, Տիւզ օղլու Սարկիս պէյի տունը։

50—29

THE SINGER

THE SINGER

Օգտուեցէք Լուսանկարիչներ

Ի դիւրութիւն լուսանկարիչ արհեստակցաց.

ՍԱՐԲԱՑԵԱՆ ԵՂԲԱՐՔ ՊԼՑՐՈՒԹ

Պատրաստի ունին միշտ լուսանկարչական ամէն կարգի նորագոյն գործիքներ, անխարդախ դեղօրայք, բազմատեսակ խարտօններ, սեսակաւոր թուղթեր և նոր ապակիներէն են։ Գիները միշտ դիւրամատչելի են մեծաքանակ և փոքրաքանակ գնողներու համար։

5—6

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱՑԻ

ԲԱՆԹԻԿԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ա. ՊՈԼԻՍ, ՄԱՆՉԷՍԹՐ, ՓԻԼԻՊԷ

×

Մանչէսդրի և ցամաքային Եւրոպայի բոլոր տարազատ գործ կեդրոններու հետ չարունակ առեւտր, յարաբերութեան մէջ ըլլալով, ԲԱՆԹԻԿԵԱՆ ԵՂԲԱՐՔ[1]*երել կ'ուտան և կը ծախեն*

ԳԱՍԱՐԼԸ, ՊԱՄՊԱ, ՊԱԹԻՍԹ, ՎԻՇԻ, ԹԱԻԻՇ

Բոլոր զանազան ապրանքներ եւն.

Բանթիկեան եղբայրներէն մին Պոլսոյ և միւսը Մանչէսդրի մէջ երկար տարիներ վարած են իրենց մօրեղբայրներուն՝ Աստուածեան եղբարց համբաւաւոր վաճառատունը։ Այս պատճառաւ Բանթիկեան եղբարք մօտէն տիպեակ են մեր հրապարակին վրայ սպառած ամէնէն ձեւաւոր և ճաշակաւոր վաճառքներուն։

Գաւառացի գնորդներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք սա մասնաւոր կէտին վրայ որ

ԲԱՆԹԻԿԵԱՆ ԵՂԲԱՐՔ գլխաւորաբար ՍԹՕՔի վրայ կը գործեն և յաճախ իրենց քով կը գտնուին ա՛յնպիսի վաճառքներ, որոնք թէ՛ գինով և թէ ճաշակով անմրցելի են հրապարակին վրայ ծախուածներուն հետ բաղդատելով։

Անոնք որ այս վաճառատան հետ կը փոփոքին գործառնութիւն ընել, կրնան վստահ ըլլալ որ իրենց ապսպրանքները պիտի գործադրուին ճշտութեամբ և փութով։

ԲԱՆԹԻԿԵԱՆ ԵՂԲԱՐՔ Պոլսոյ վաճառատունը կը գտնուի Ալեանաք խանի կից։